



ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Սուլովիովի Հակահայ Ելոյթը Եւ Հայաստանի Ընդդիմութեան Լռութիւնը

Ռուսաստանի մէջ տակաւին կան ազդեցիկ շրջանակներ, որոնք չեն կրնար հաշտուիլ այն իրողութեան հետ, որ Հայաստան որպէս անկախ երկիր իրաւունք ունի վարելու իր ուրոյն արտաքին քաղաքականութիւնը ու կը նային անոր որպէս Ռուսաստանի ծայրամաս եւ կամ մէկ գաւառ: Այս մօտեցումին վերջին մէկ արտայայտիչը համդիսացաւ Ռուս հաղորդավար, պետական քարոզչութեամբ զբաղող Վլատիմիր Սուլովիով, որ իր յայտագրի ընթացքին արտայայտեց այն միտքը, որ Հայաստանը կորսնցնելը դէմ է Ռուսաստանի ազգային շահերուն: Անոր պնդմամբ՝ «յատուկ ռազմական գործողութիւն» պէտք է իրականացնել ոչ միայն Ուքրանիոյ մէջ, այլեւ ՌԴ ազդեցութեան այլ տարածքներու մէջ եւ «պէտք է թքած ունենալ միջազգային իրաւունքին վրայ»:

Սուլովիով Հայաստանը կը նմանցնէ Վենեզուէլայի օրինակին, երբ Ամերիկեան զօրքերը յարձակում գործելով ձերբակալեցին նախագահ Մատուրոն ու այժմ կը փորձեն իրենց ամբողջական վերահսկողութեան տակ առնել այդ երկիրը՝ յատկապէս անոր քարիւղի պաշարները:

Սուլովիովի սպառնալիքները մեծ վրդովմունք յառաջացուցին Հայաստանի համրային կարծիքին մօտ, իսկ Արտաքին գործոց նախարարութիւնը բողոքի գիր յանձնեց Երեւանի մէջ Ռուսաստանի դեսպանին՝ անբոյլատրելի ոտնձգութիւն ու թշնամական դրսեւորում նկատելով պետական հեռատեսիլէն հնչած խօսքերը, «որոնք կոպտօրէն կը խախտեն Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ բարեկամական յարաբերութիւններու հիմնարար սկզբունքները»:

Վերջին ամիսներուն Ռուսաստանի պաշտօնական ներկայացուցիչներուն կողմէ Հայաստանի հասցէին հնչող մեղադրանքները բաւական նուազած էին եւ միակ հարցը, որուն մասին կ'արտայայտուէին անոնք, այն էր, որ Եւրոպական Միութեան անդամակցութիւնը չի կրնար համատեղուիլ Եւրասիական Տնտեսական Միութեան հետ: Ներկայիս այդ կառոյցը կը նկատուի Հայաստանի թիւ մէկ տնտեսական գործընկերը, իսկ Հայաստան պաշտօնական դիրքո-

Շար.ը էջ 6

Վլատիմիր Սուլովիով Խօսած Է Հայաստանի Դէմ Ռազմական Յարձակման Անհրաժեշտութեան Մասին. Ռուսաստանի Դեսպանը Կանչուած Է Արտաքին գործոց Նախարարութիւն

Հայաստանի մէջ Ռուսաստանի դեսպանը կանչուած է Արտաքին գործերու նախարարութիւն: Անոր յանձնուած է բողոքագիր, որուն մէջ խոր վրդովմունք արտայայտուած է պետական հեռուստաընկերութեան մաս կազմող ծրագրի եթերով հնչած յայտարարութիւններուն առնչութեամբ: Ընդգծուած է, որ անոնք Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան դէմ անթոյլատրելի ոտնձգութիւն են ու թշնամական դրսեւորում եւ կոպտօրէն կը խախտեն Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ բարեկամական յարաբերութիւնների հիմնարար սկզբունքները:

Ռուս հաղորդավար, պետական քարոզչութեամբ զբաղող Վլատիմիր Սուլովիով յայտնած է, որ Հայաստանը կորսնցնելը դէմ է Ռուսաստանի ազգային շահերուն:

Անոր պնդմամբ՝ «յատուկ ռազմական գործողութիւն» պէտք է իրականացնել ոչ միայն Ուքրանիոյ մէջ, այլեւ ՌԴ ազդեցութեան այլ տարածքներու մէջ եւ «պէտք է թքած ունենալ միջազգային իրաւունքին վրայ»:

«Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ Արամ Սարգսեան ֆէյսպուքի իր էջով գրառում



Ռուս հաղորդավար Վլատիմիր Սուլովիով

կատարած է՝ անդրադառնալով ռուս լրագրող, փութինամերձ շրջանակներէն հանդէս եկող Վլատիմիր Սուլովիովի վերջին յայտարարութիւններէն մէկուն:

«Ըստ ՌԴ պետական-պաշտօնական քարոզչութեամբ զբաղող Վլատիմիր Սուլովիովի՝ ՀՀ-ն ոչ թէ պետութիւն է, այլ ընդամենը ՌԴ ազդեցութեան գօտի: Ստացուած է, որ իրենց ենթակաջ հինգերորդ



Հայաստանի մէջ Ռուսաստանի դեսպան Սերկէյ Քոփիրքին

շարասիւնում էլ ոչ թէ ՀՀ նախկին նախագահներ, հոգեւորականներ, կամ օլիկարխներ են, այլ՝ ՌԴ ազդեցութեան տարրեր... Ազդեցութեան գօտու առումով մեր ժողովուրդը իր տեսակէտը ասել է 2018-ի եւ 2021-ի ընտրութիւններում:

«Սուլովիովը վստահ է, որ նոյնն է ասելու նաեւ 2026-ին,

Շար.ը էջ 6

Միրզոյեան Եւ Ռուպիո Հաստատեցին ԹՐԻՓՓ-ի Վերաբերեալ Համատեղ Յայտարարութիւնը



Մարքո Ռուպիո եւ Արարատ Միրզոյեան Ուաշինկթընի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյան Ուոշինկթընի մէջ հանդիպում ունեցաւ ԱՄՆ պետական քարտուղար Մարքո Ռուպիոյի հետ:

Ինչպէս ԱԳԴ-ն հաղորդած է, Արարատ Միրզոյանն ու Մարքո Ռուպիոն գոհունակութեամբ շեշտած են ՀՀ-ԱՄՆ ռազմավարական

գործընկերութեան զարգացման եւ ձեռք ձգուած պայմանաւորուածութիւններու կեանքի կոչման աշխոյժ աշխատանքները, համատեղ նախաձեռնութիւններն ու յետագայ հեռանկարները:

ՀՀ արտաքին գործոց նախարարը եւ ԱՄՆ պետքարտուղարը

Շար.ը էջ 6

Հայաստանը՝ «The New York Times» Թերթի Զբօսաշրջութեան Ցանկին Վրայ



Տնտեսութեան նախարարութեան Զբօսաշրջութեան կոմիտէն ընկերային ցանցին մէջ հրապարակած է «The New York Times» հեղինակաւոր միջազգային պարբերականի յօդուած մը, ուր Հայաստանը ներառուած է 2026 թուականին առաջարկուող ճամբորդական ուղղութիւններու ցանկին մէջ՝ յատկացնելով 20-րդ տեղը աշխարհի լաւագոյն ուղղութիւններու շարքին:

«Սա եւս մէկ անգամ կը հաստատէ, որ Հայաստանը գրաւիչ ուղղութիւն է իր հնագոյն մշակութով, գինիի հարուստ աւանդութներով եւ անկրկնելի բնութեամբ: Բացայայտէք Հայաստանը 2026-ին», - նշուած է կոմիտէի տարածած հաղորդագրութեան մէջ:

«66-ի Ստուերը». Ամերիկյան Քանդուժ Ե Միջազգային Ճարտարապետութիւնը

ԳՈՌ ԱՐՐԱՅԱՄԵԱՆ

2026 թուականի Յունուարի 7-ը պատմութեան մէջ կը մնայ որպէս ԱՄՆ-ի «մեծ բեռնաթափման» եւ կլուպալ աշխարհաքաղաքականութեան փոփոխութեան օր: Այդ օրը նախագահ Տանըլտ Թրամփը ստորագրեց «ազգային ինքնիշխանութեան վերականգնման եւ միջազգային աւելորդ պարտաւորութիւնների կրճատման մասին» նախագահական յուշագիրը: Այն պարզապէս փաստաթուղթ չէր, այլ գործադիր հրաման, որով հրահանգուեց Պետդէպարտամենտին եւ բոլոր դաշնային գերատեսչութիւններին իրականացնել ԱՄՆ-ի դուրսբերումը 66 միջազգային կառուցներէից եւ համաձայնագրերից, որոնցից 31-ը կապուած են ՄԱԿ-ի հետ: Յուշագրի թիրախում են ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարի երեսխաների նկատմամբ բռնութեան հարցերով յատուկ ներկայացուցչի գրասենեակը, Եւրոպայի խորհրդի Վենետիկի յանձնաժողովը, ՄԱԿ-ի ժողովրդավարութեան հիմնադրամը, ՄԱԿ-ի առեւտրի եւ զարգացման համաժողովը, եւ այլն: Սակայն նշանակալի են յատկապէս երկուսը

- ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխութեան շրջանակային կոնվենցիայ (UNFCCC). Դուրս գալով դրանից՝ ԱՄՆ-ն աւտօմատ լքում է եւ Փարիզեան համաձայնագիրը, եւ կլիմայական բոլոր այլ սահմանափակումները: Սա ԱՄՆ-ի համար «էներգետիկ ազատագրման» ակտ է, որը քանդում է կլիմայական բոլոր սահմանափակումների իրաւական հիմքը: Սա Ուաշինկթօնին հնարաւորութիւն է տալիս առաւելագոյնի հասցնել սեփական եւ վեներգուելական հանածոյ վառելիքի արդիւնահանումը, կտրուկ նուազեցնել ամերիկեան արտադրանքի ինքնարժէքը Ձիւնաստանի հետ մրցակցութիւնում եւ դադարեցնել միլիարդաւոր տոլարների յատկացումները միջազգային «կանաչ հիմնադրամներին»: ԱՄՆ-ն ստանում է «արդիւնաբերական ամենաթողութիւն», որպէսզի իր տնտեսական հզօրութիւնը վերածի բացարձակ աշխարհաքաղաքական զէն-



քի՝ առանց հաշուետու լինելու միջազգային բնապահպանական ասո- եաններին:

- ՄԱԿ-ի Մարդու իրաւունքների խորհուրդ (UNHRC) եւ ՅՈՒՆԵՍԿՕ (UNESCO). Այս կառույցներից հրաժարումով ԱՄՆ-ն վերջնականապէս քանդում է այն բարոյական եւ մշակութային կաղապարները, որոնք կարող էին զսպել նրա աշխարհաքաղաքական էքսպանսիան: Այս քայլը Ուաշինկթօնին ազատում է մարդու իրաւունքների եւ մշակութային ժառանգութեան պաշտպանութեան «բազմակողմ պարտաւորութիւններից»՝ թոյլ տալով արտաքին քաղաքականութեան մէջ առաջնորդուել բացառապէս սեփական շահերով, ինչպէս նաեւ պաշտպանել դաշնակիցներին միջազգային քննադատութիւնից: Սա յստակ ուղերձ է աշխարհին. ԱՄՆ-ն այլեւս չի խաղալու գլոբալիստական կանոններով, որտեղ նրա ուժը կարող է սակարկուել կամ կաշկանդուել քուէարկութիւնների միջոցով:

Աւելի վաղ, 2025թ. ընթացքում, Թրամփը հրամանագրով արգելել էր որեւէ տեսակի համագործակցութիւն եւս երկու խոշորագոյն կառույցներին՝ Միջազգային քրէական դատարանին (ICC) եւ Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւնը (WHO): ՄԲԴ-ի հետ կամուրջների այրումը ԱՄՆ-ի համար ռազմավարական զրահ է: Դուրս գալով միջազգային արդարադատութեան դաշ-

տից՝ Ուաշինկթօնն իրեն փաստացի իրաւունք է վերապահում կիրառել ուժ ցանկացած վայրում՝ առանց անհանգստանալու ապագայ դատական հայցերի համար. ուժեղն է սահմանում, թէ որն է յանցագործութիւնը:

Իսկ ԱՀԿ-ից ԱՄՆ-ի դուրսբերումը եւ ֆինանսաւորման դադարեցումը Ուաշինկթօնը պաշտօնապէս բացատրել էր նրանով, որ ԱՀԿ-ն գտնուում է Փեքինի «ոչ պատշաճ քաղաքական ազդեցութեան» տակ: Թրամփի վարչակազմը գտնում է, որ ԱՄՆ-ն կատարում է անհամաչափ մեծ վճարումներ (ֆինանսաւորման մօտ 18%-ը), մինչդեռ Ձիւնաստանը վճարում է 90%-ով պակաս: WHO-ից դուրս գալը նշանակում է դադարեցնել «ամերիկացի հարկատուների փողերի վատնումը» մի կառույցի վրայ, որը Ուաշինկթօնի կարծիքով դարձել է չինական գործիք: Այս քայլով ԱՄՆ-ն աւելի մերժում է ցանկացած «գլոպալ կառավարում», որը կարող է պարտադրել բժշկական ստանդարտներ կամ սահմանափակումներ եւ ցանկանում է ինքնուրոյն տնօրինել իր դեղագործական շուկան եւ կենսաբանական անվտանգութիւնը՝ առանց միջազգային «բիւրոկրատների» միջամտութեան:

Յուշագրի ստորագրումից անմիջապէս յետոյ ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն հանդէս եկաւ յայտարարութեամբ, որտեղ կողաւորեց ԱՄՆ-ի նոր՝ «նախեւառջ ԱՄՆ-ն» աշխարհաքաղաքական հա-

ւատամքը. «մենք չենք շարունակի ծախել ռեսուրսներ, դիւանագիտական կապիտալ եւ մեր շահերի հետ կապ չունեցող կամ դրանց հակասող ինստիտուտներում: Մենք մերժում ենք իներցիան եւ զաղափարախօսութիւնը՝ նախապատուութիւնը տալով խոհեմութեանը եւ նպատակասլացութեանը: Մենք ձգտում ենք համագործակցութեան այնտեղ, որտեղ այն ծառայում է մեր ժողովրդին եւ կը կանգնենք այնտեղ, որտեղ այն չի ծառայում», -ասում է Ռուբիոն իր յայտարարութիւնում:

ԱՄՆ-ի գլոպալ «ինքնամեկուսացման» պրոցեսի եւ Ռուբիոյի յայտարարութիւնն ունեն դոկտրինալ նշանակութիւն, որոնք կարճ կարելի է ուղերձային երեք ուղղութիւնների բաժանել:

1. Անցում բազմակողմանիութիւնից դէպի երկկողմանիութեան. ԱՄՆ-ն հասկացնում է, որ նախապատուութիւնը տալիս է երկկողմ ուղղակի գործարքներին, ինչպէս, օրինակ, TRIPP նախագիծը Հարաւային Կովկասում, ու քրանական թարկարժէք մետաղների հասանելիութիւն ստանալը եւ այլն, որոնցում ԱՄՆ-ի դերը գերիշխող է:

2. Ուժի իրաւունքի լեգիտիմացում. դուրս գալով միջազգային կոնվենցիաներից՝ Ուաշինկթօնն իրեն ազատում է «միջազգային դատապարտման» հեռանկարից: Սա ուղիղ ազդանշան է, որ ԱՄՆ-ն

Շար.ը էջ 6

Մալմիա
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly

Organ of the **Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA**
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$75.00, \$150.00 (First Class)
Canada \$ 250.00 (Air Mail)
Overseas \$400.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Ալիւնը Զրաժարուժ Ե »Յարաւային Ատրպէյճանից«

ՎԱՅՐԱՍ ԱԹԱՆԵՍԵԱՆ

Հարեւան իրանում ծաւալուող իրադարձութիւնները, չնայած երկու երկրների պետական-քաղաքական ու հանրային համակարգի արտաքուստ «արմատական տարբերութեանը», պէտք է Ատրպէյճանում իշխող կլանի համար լուրջ ազդակ լինեն: Այդ մասին Յունուարի 11-ի խմբագրականում գրել է ԱԺձ «ազդալիզ» պաշտօնաթերթը: Հեղինակի գնահատմամբ, Ատրպէյճանի իշխանութիւնները նոյնպէս մարդկանց «խեղդում են նրանց իրական հնարաւորութիւններին անհամաչափ հարկերով, զանազան տուրքերով»: Երկու երկրներում «ոչ թէ օրէնքը, այլ բիւրոկրատիան եւ կոռուպցիան են լուծում կենսական նշանակութեան հարցերը»:

Ամենաշական դիտարկումը, որ կարճ յօդուածում արել է ընդդիմադիր լրատուամիջոցը, վերաբերում է նրան, որ թէ իրանում, թէ

Ատրպէյճանում «քաղաքացիի ազատ ինքնութիւն չունի, նրա «սուբիեկտութիւնը» որոշում է իշխող վարչախումբը»: Եթէ իրանում քաղաքացին «հարկադրուած է լինել կրօնական ինքնութեան կրող, ապա Ատրպէյճանում նրան պարտադրում են անձի եւ իշխող վերնախաւի պաշտամունք եւ ալոպիսով խեղաթիւրում անկախութեան, պետականութեան կայացումը»:

Ակնարկն ակնյայտօրէն վերաբերում է «համազգային առաջնորդ» պետականօրէն ներմուծուած կերպարին, որ մահուանից անմիջապէս յետոյ վերագրուել է Հէյդար Ալիեւին եւ շարունակում է մնալ իշխող վարչակազմի զաղափարախօսութեան հիմքը: Իրանում ալո կերպարն ինստիտուցիոնալ է, պետութեան գլուխը հեզեւոր առաջնորդն է: Ատրպէյճանում Հէյդար Ալիեւի անձի պաշտամունքը ոչ սահմանադրութեամբ, ոչ որեւէ օրէնքով ամրագրուած չէ, բայց պարտադիր է պետական բո-

լոր ինստիտուտների եւ հաստատութիւնների համար:

Պաքուի իշխանական մամուլի հրապարակումներում իրանում ծաւալուող իրադարձութիւնների շուրջ մեծ զգուշաւորութիւն է դիտարկուում: Աւելի քան երեսունհինգ տարի սնուցուած՝ «միասնական Ատրպէյճանի» քարոզչութիւնը տեղը գիջել է խոր անհանգստութեանը: Գրեթէ բոլոր փորձագէտները գտնում են, որ «Ատրպէյճանի համար իրանի մասնատումը լուրջ սպառնալիք կը լինի»: Փաստացի իշխած Ալիեւը հրաժարուում է «հարաւային Ատրպէյճանի եղբայրների եւ քոյրերի իրաւունքների պաշտպանութիւնից»: Ըստ տեղեկութիւնների, Յունուարի 10-ին Թաւրիզի ցուցարարները բարձրացրել են «Ատրպէյճանը թող միասնական, չկամեցողը կոչ լինի» գրութեան պաստառ: Պաքուից որեւէ հրապարակային արձագանք չի հետեւել:

«ԱՌԱԶԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ԼՈՒՐԵՐ

Կաթողիկոսին Գիտութեամբ Է Որ Համացանցին Մէջ Յայտնուած Են Արշակ Սրբազանի Մասին Նիւթերը. Գէորգ Եպիսկոպոս

Մասյացոտնի թեմի հոգեւոր առաջնորդ տէր Գէորգ եպիսկոպոս Սարոյեանը, որուն Գարեգին Բ-կաթողիկոսը Յունուաի 10-ի որոշմամբ ազատած է թեմակալ առաջնորդի պաշտօնէն, գալիսկողային յայտարարութիւն ըրած է:

Ան յայտնած է, որ եթէ Գարեգին Բ. կաթողիկոսը չէր ուզեր, որ ՀՀ վարչապետի բարենորոգման առաջարկին միանային 10 եպիսկոպոսները եւ բողոքի ձայն բարձրացնէին, թող չհրապարակէր Մայր Աթոռի դիւանապետ Արշակ Խաչատրեանին առնչուող գալթակողային նիւթերը:

Այս մասին ան խօսած է Մասիսի սուրբ Թադէոս եկեղեցւոյ մէջ մատուցուած պատարագի աւարտին՝ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին: Ծղոյղ հարցումին, թէ կաթողիկոսը հրապարակած այդ յայտնի եւ արմկայարոյց տեսանիւթերը, Գէորգ եպիսկոպոսը պատասխանած է.

«Այո՛: Քննչական կոմիտեում կա՞յ գործ յարուցուած, ինչի՞ հիման վրայ է յարուցուած՝ համացանցում եղած տեսանիւթերի: Համացանցում կայ նաեւ, թէ որտեղից են այդ տեսանիւթերը յայտնուել: Մեր մասին այս վերջին շրջանում լուտանքներ, տեղեկութիւններ ու բամբասանքներ հրապարակուեցին, չեմ կարծում, թէ գտնում էք՝ դրանք իշխանութեան կողմից են տարածուած: Այո՛, տեսանիւթերը հրապարակուել են կաթողիկոսի գիտութեամբ: Շատ նեղուած էին, որ 2 արքեպիսկոպոս է միայն ձերբակալուել: Շատ նեղուած էին, որ Արշակ սրբազանին չեն ձերբա-



Մասյացոտնի թեմի հոգեւոր առաջնորդ Գէորգ Եպիսկոպոս Սարոյեան

կալել ու սպասում էին՝ երբ պէտք է ձերբակալեն», - ըսած է ան:

Գէորգ եպիսկոպոսը նաեւ յայտնած է, որ Գարեգին Բ. բոլոր եկեղեցականներուն դէմ հեղինակութիւն արատաւորող փաստներ ունի:

Աւելի վաղ, համացանցին մէջ մտերմիկ տեսանիւթեր հրապարակուած էին, որոնց մէջ, ըստ պնդումներուն՝ Մայր Աթոռի դիւանապետ, կուսակրօն Արշակ Խաչատրեանն է:

Խաչատրեանի պաշտօնավարումը կասեցնելու յորդորով հանդէս եկած եպիսկոպոսները իրենց պահանջը պայմանաւորած էին համացանցին մէջ տարածուած տեսանիւթով, որուն մէջ ըստ պնդումներուն՝ ան սեռային բնոյթի գործողութիւններու մէջ է քեռկինին հետ:

2025 Թուականի Ընթացքին Հայաստան Այցելած Է 2 Միլիոն 263 Հազար Ձբօսաշրջիկ



2025 թուականի Դեկտեմբեր ամսուն Հայաստան այցելած է 139 հազար 933 զբօսաշրջիկ, իսկ ընդհանրապէս 2025 թուականի ընթացքին Հայաստան այցելած է 2 միլիոն 263 հազար 642 զբօսաշրջիկ:

Կառավարութեան Յունուար 8-ի նիստին այս մասին յայտնեց Հայաստանի տնտեսութեան նախարար Գէորգ Պապոյեան՝ ամփոփելով 2025 թուականի ցուցանիշները զբօսաշրջութեան ոլորտին մէջ:

Պապոյեանի խօսքով՝ 2025 թուականի Մայիս, Յունիս, Յուլիս, Օգոստոս, Հոկտեմբեր, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր ամիսները Հա-

յաստանի պատմութեան մէջ զբօսաշրջիկներու թուաքանակի առումով եղած են լաւագոյնները:

«2025 թուականին Հայաստանն ունեցել է 2 միլիոն 263 հազար 642 զբօսաշրջիկ, ինչը 2,5 տոկոսով աւելի է նախորդ տարուայ ցուցանիշից եւ 19,4 տոկոսով աւելի է 2019 թուականի ցուցանիշից», - մանրամասնեց նախարարը:

Վերջինիս խօսքով՝ զբօսաշրջիկներու թուաքանակի առումով Հայաստանի համար պատմական լաւագոյն տարին եղած է 2023 թուականը, երբ եղած է 50 հազարով աւելի զբօսաշրջիկ, քան այս տարի:

Մետիայի Զգալի Հատուած Ընդդիմադիր Դաշտի Ֆինանսական Կեդրոններու Ազդեցութեան Տակ Է Կարապետեան, Քոչարեան, Սարգսեան



Հայաստանի մէջ կայ երեւոյթ մը, որ յեղափոխութենէն առաջ հիմնականին մէջ կեդրոնացած էր իշխանութեան ձեռքը, իսկ յեղափոխութենէն յետոյ՝ ընդդիմադիր դաշտին մէջ գործող կեդրոններու ազդեցութեան տակ. խօսքը լրատուամիջոցներու հական հատուածի մը մասին է:

Ֆէյսպուքի իր էջով այս մասին գրած է «Քաղաքացիական Պայմանագիր» խմբակցութեան պատգամաւոր Արուսեակ Մանավագեանը՝ շարունակելով.

«Մինչ յեղափոխութիւնը բազմաթիւ լրատուամիջոցներ ֆինանսապէս կախուած էին իշխանութիւնից եւ այդ պատճառով սահմանափակ էին իրենց քննադատութեան մէջ:

«Յեղափոխութիւնից յետոյ այդ կախուածութիւնը փոխուեց. այսօր մետիայի զգալի հատուածն այլեւս չի ֆինանսաւորուում իշխանութեան կողմից, սակայն յայտնուել է ընդդիմադիր դաշտում գործող խոշոր ֆինանսական կեդրոնների ազդեցութեան տակ՝ Կարապետեան, Քոչարեան, Սարգսեան:

«Արդիւնքում ձեւաւորուել է միջավայր, որտեղ մեծ ֆինանսական միջոցներ ունեցող շրջանակները փորձում են երկարաժամկէտ

եւ աշխոյժ կերպով յառաջ մղել իրենց քաղաքական օրակարգը՝ յաճախ կիրառելով ապատեղեկատուութիւն, միակողմանի ներկայացում եւ սուր հակաքարոզչություն իշխանութեան դէմ:

«Հանրային դաշտում լայնօրէն շրջանառոււմ են տեղեկութիւններ, որ որոշ քաղաքական ուժեր իրենց փոխկապակցուած մետիայի աշխատակիցներին վճարում են միլիոնների հասնող աշխատավարձեր: Արդիւնքում մարդիկ խնդիր չունեն մի կողմ դնել լրագրողական բարոյականութիւնը, զբաղուել ինքնագովազդով եւ գուզահեռաբար իշխանութիւնների դէմ ատելութեան խօսք տարածել:

«Սա լրագրողական ազատութեան դէմ խօսք է, ընդհակառակը՝ ակնկալիքն այն է, որ լրագրողներն ու լրատուամիջոցները լինեն այնքան անկախ եւ արհեստավարժ, որ կարողանան առարկայականօրէն քննադատել իշխանութիւններին՝ միաժամանակ չլռելով միւս քաղաքական դերակատարների սխալների մասին:

«Այս երկրում կան նաեւ բազմաթիւ դրական գործընթացներ, որոնք նոյնպէս արժանի են լուսաբանման»:

ՀՀ-Ը 2026-ի Ընտրութիւններուն Պիտի Մասնակցի Դաշինքով. Սաղաթէւան

ՀՀ-ն 2026-ի խորհրդարանական ընտրութիւններուն պիտի մասնակցի դաշինքային ձեւաչափով: Այս մասին այսօր ասուլիսին յայտարարեց ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն մարմինի ներկայացուցիչ, ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթէւեանը:

Սաղաթէւեանի խօսքով՝ առաջնային քննարկումները պիտի սկսին «Հայաստան» դաշինքին հետ:

«Ունենք ցանկութիւն, հնարաւորութիւն, ինչու չէ, յաւակնութիւն դաշինքը պահպանելու, այն ընդլայնելու եւ աւելի ազդեցիկ միաւոր դարձնելու: Սա հերթական, սովորական կամ ընթացիկ ընտրութիւններ չեն մեզ համար: Այս ընտրութիւնների արդիւնքով է որոշուելու հայ ժողովրդի եւ մեր պետականութեան ճակատագիրը: Մենք այս ընտրութիւնները դիտում ենք իբրեւ հնարաւորութիւն այս իշխանութեան վերարտադրութիւնը կանխելու համար, եւ մեր այս որոշմանը մենք եկել ենք



ՀՀ-ի պատգամաւոր Իշխան Սաղաթէւան

նաեւ այդ դրդապատճառով, այդ նպատակից ելնելով, որ մէկտեղենք մեր ուժերը, հնարաւորութիւնները աւելի ազդեցիկ կերպով ներկայանալու եւ մեր խնդիրը լուծելու համար», - ըսաւ Սաղաթէւեան:

ԼՈՒՐԵՐ

ԱԱԾ-ն Մեր Պետութեան Կարեւորագոյն Անկիւնաքարերէն Մէկն Է. ԶՅ Վարչապետ



Վարչապետ Նիկոլ Փաշինեան կը մասնակցի Ազգային Անվտանգութեան Ծառայութեան մարմիններու աշխատողի օրուան նուիրուած միջոցառման

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան այցելած է Ազգային Անվտանգութեան Ծառայութիւն եւ ներկայ գտնուած է Ազգային անվտանգութեան մարմիններու աշխատողի օրուան նուիրուած միջոցառման:

«Պէտք է արձանագրեմ, որ Ազգային Անվտանգութեան Ծառայութիւնը մեր պետութեան կարեւորագոյն անկիւնաքարերից մէկն է եւ, ըստ էութեան, այն յենասիւններից մէկը, որն առանցքային նշանակութիւն ունի Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան, սահմանադրական կարգի պահպանութեան տեսակէտից», - Նիկոլ Փաշինեանի խօսքերը մէջբերուած է

ՀՀ վարչապետի աշխատակազմի տարածած հաղորդագրութեան մէջ:

Երկրի ղեկավարին խօսքով, կառավարութիւնը որդեգրած է պետութեան յարատեւութեան օրակարգը եւ բոլոր նպատակներու, գործողութիւններու կեդրոնին եւ առանցքին դրուած է պետութիւնը՝ Հայաստանի Հանրապետութիւնը:

«Եւ շատ կարեւոր է, որ պետութիւնը՝ անկախ քաղաքական իշխանութեան բնոյթից եւ էութիւնից, ունենայ ամուր յենարան, թիկունք: Սա չափազանց կարեւոր է մեր պետութեան յարատեւութիւնը եւ զարգացումն ապահովելու համար», - ընդգծած է վարչապետը:

Արարատ Միրզոյեան Եւ Քրիսթինա Քվին Անդրադարձած Են «Թրիփի Ուղի» Ծրագրի Կեանքի Կոչման Ուղղութեամբ Քայլերուն



Նախարար Արարատ Միրզոյեան Եւ ԱՄՆ դեսպան Քրիսթինա Քվին հանդիպումի ընթացքին

ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան ընդունած է Հայաստանի մէջ Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտակարգ եւ լիազօր դեսպան Քրիսթինա Քվինը՝ վերջինիս դիւանագիտական առաքելութեան աւարտի առիթով:

Երկուստեք գոհունակութեամբ ընդգծուած են վերջին տարիներուն իրականացուած համատեղ աշխատանքի արդիւնքները, որոնց շնորհիւ հնարաւոր դարձած են Հայաստանի Հանրապետութեան եւ Միացեալ Նահանգներու միջեւ ռազմավարական գործընկերութեան հաստատումն ու անոր շարունակական զարգացումը:

Ի թիւս այլ ծրագրերու, գրուցակիցները անդրադարձ կատարած են «Թրիփի ուղի» ծրագրի կեանքի կոչման ուղղութեամբ իրականացուող քայլերուն՝ ընդգծելով նախաձեռնութեան կարեւորութիւնը տարածաշրջանային փոխկապակցուածութեան, կայուն զարգացման խթանման տեսանկիւնէն:

Նախարար Միրզոյեան շնորհակալութիւն յայտնած է դեսպան Քվինին երկկողմ յարաբերութիւններու ամրապնդման եւ գործընկերութեան օրակարգի հարստացման գործին մէջ ունեցած աւանդին համար՝ յաջողութիւն մաղթելով հետագայ գործունէութեան մէջ:

2018-ին Համեմատ՝ Պաշտպանական Ծախսերը Աճած Են 1,1 Միլիառ Տոլարով. Պապիկեան



ԶՅ պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան մամլոյ ասուլիսի ընթացքին

2018-ին համեմատ՝ 2025-ի պաշտպանական ծախսերը աճած են 1,1 միլիառ տոլարով: Անցնող տարին ամփոփող ասուլիսի ժամանակ այս մասին յայտնեց պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեանը:

«2018-ին պաշտպանութեան ծախսերը կազմել են 245 միլիառ դրամ, իսկ 2025-ին՝ 664 միլիառ դրամ: Պաշտպանութեան ոլորտի ծախսերն աւելացել են 1,1 միլիառ տոլարով», - ըսաւ նախարարը:

Անդրադառնալով ճարտարապետական, ամրաշինական եւ ընդհանուր շինարարական ծախսերուն՝ պաշտպանութեան նախարարը նշեց, որ այդ ծախսերը եւս կտրուկ աճած են: Անոր խօսքով՝ 2025-ը բոլոր տարիներու, գուցէ յառաջիկայ 30 տարիներու ամենաբարձր ընդհանուր շինարարութեան ծախսեր ունեցող տարին էր:

«2018-ի ծախսերը շուրջ 17 միլիառ դրամ էին, 2025-ին այդ ծախսերը կազմել են 57 միլիառ դրամ: Սա չի կարող չունենալ իր արդիւնքն ու հետեւանքը», - ըսաւ նախարարը:

Պապիկեանի խօսքով՝ խաղաղութեան պատրաստուելով կարելի է նաեւ խաղաղութեան զուգահեռ ունենալ որոշակի պաշտպանունակութիւն:

«Խաղաղութիւնը նաեւ նրա մասին է, որ մենք հանգիստ կարող

ենք ապահովել մեր երկրի երկարաժամկէտ պաշտանունակութիւնը՝ անկախ նրանից՝ սպառնալիքներ կան, թէ չկան: Մենք ինքներս պէտք է գնահատենք, թէ ինչ հնարաւորութիւններ ունի մեր երկիրը, ինչ արտաքին մարտահրաւէրներ պէտք է դիմագրաւենք: Խաղաղութեան պատրաստուելիս կարելի է նաեւ խաղաղութեանը զուգահեռ ունենանք որոշակի պաշտպանունակութիւն, որը ոչ ոքի անվտանգութեանն ու տարածքային ամբողջականութեանը չի սպառնում: Ընդհակառակը՝ ապահովում է մեր անվտանգութիւնն ու տարածքային ամբողջականութիւնը», - ըսաւ նախարարը:

Անդրադառնալով Ատրպէյճանի շարունակական զինման ու բանակի հզօրացման՝ Պապիկեան յայտնեց. «Ես չեմ պատրաստուում որեւէ երկրի, այդ թւում Ատրպէյճանի հետ մրցակցի մէջ մտնել: Բայց սա չի նշանակում, որ Հայաստանի Հանրապետութիւնը դադարեցնելու է սպառազինութեան, ռազմական սարքերի գնումը, բանակի արդիականացումը: Իմ ներկայացրած թիւերը դրա վառ վկայութիւնն են»:

Պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան մամուլի ասուլիսի ժամանակ անդրադարձած է նաեւ զօրակոչին՝ նշելով, որ նախորդ տարի զօրակոչի աճ արձանագրուած է:

Հայաստանն ու Ատրպէյճանը Առեւտուրի Համար Ապրանքներու Ցանկեր Կը Փոխանակեն

Հայաստանն ու Ատրպէյճանը հաւանական ապրանքներու ցանկեր կը փոխանակեն, թէ ինչ գնելու եւ վաճառելու հարցով հետաքրքրուած են: Քննարկում կայ, ուսումնասիրութեան փուլին է հարցը: Կառավարութեան մէջճեպագրոյցի ժամանակ այս մասին յայտնած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Լրագրողի հարցումին, թէ ինչ սկզբունքով ընտրուած են այն ընկերութիւնները, որոնք այժմ Ատրպէյճանէն ներկրուած պենզին կը վաճառին, վարչապետը պարզաբանեց.

«Հայաստանի եւ Ատրպէյճանի փոխվարչապետերի հանդիպման ժամանակ Ատրպէյճանի փոխվարչապետն առաջարկել է Հայաստանին նաւթամթերք վաճառել: Հայաստանի կառավարութիւնը նախնական ուսումնասիրել է դաշտը, այն գործարարներին, որոնք մեր գնահատմամբ հակուած չեն լինի դրանից քաղաքական շարժում ստեղծել, ասել, որ օրինակ կառավարութիւնը մեզ ստիպում է

Ատրպէյճանից պենզին գնել, իսկ մենք չենք գնի... Արդիւնքում Հայաստանից երկու ընկերութիւն կապ են հաստատել, պատրաստակամութիւն յայտնելով ներկրել պենզին:

«Նախնական շրջանում ընկերութիւններ եղան, որ հրաժարուեցին վաճառել այդ պենզին: Արդիւնքում մեր մտավախութիւնը ճիշդ էր: Այժմ կարծում եմ, որ այդ շուկան եւ հնարաւորութիւնը պէտք է բացել բոլորի համար եւ ով ցանկանայ կարողանայ դրանից օգտուել, ոչ մի սահմանափակում չկայ»:

Դեկտեմբերին Ատրպէյճանէն Վրաստանի տարածքով առաջին անգամ Հայաստան ժամանեց ատրպէյճանական Socar ընկերութեան մօտ 1300 թոն պենզինով բեռնուած 22 վաւոններով գնացքը:

Ատրպէյճանէն Հայաստան նաւթամթերքի մատակարարումները կը շարունակուին:

Բեռը Հայաստան պիտի հասնի Վրաստանի տարածքով:

TRIPP-ը Տնտեսական Մեծ Հնարաւորութիւններ Պիտի Բանայ Հարաւային Կովկասի Համար, Ըսած Է ՆԱԹՕ-ի Ներկայացուցիչ

Հարաւային Կովկասի մէջ ՆԱԹՕ-ի գրասենեակի ղեկավար Ալեքսանտր Վիննիքով յայտնած է, որ TRIPP (Տարածաշրջանային ենթակառուցում ձեռնարկ եւ գործընկերութեան հարթակ) նախաձեռնութիւնը կրնայ տնտեսական զգալի հնարաւորութիւններ բանալ ամբողջ տարածաշրջանին համար եւ նպաստել Հայաստանի ու Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման: Ատրպէյճանական APA-ին տուած հարցազրոյցին, ՆԱԹՕ-ի ներկայացուցիչը ընդգծած է, որ Դաշինքը կ'ողջունէ մշտական խաղաղութեան պայմանագրի ձեռքբերման ուղղուած բոլոր կառուցողական քայլերը, ինչ որ առանցքային նշանակութիւն ունի Սեւծովեան տարածաշրջանի կայունութեան համար:

Ըստ Վիննիքովի՝ Հարաւային Կովկասը մեծ ճանապարհային հանգոյց դառնալու ներուժ ունի, սակայն այդ կը պահանջէ ժամանակակից ենթակառուցում ձեռնարկ զարգացում եւ բեռներու արդիւնաւէտ փոխադրման ապահովում տարբեր երկիրներու տարածքով: Ան նշած է, որ Օգոստոս 8-ին Ուաշինկթընի մէջ ձեռք բերուած համաձայնութիւնը եւ տարածաշրջանային կապերու ցանցի ստեղծումը, որ պիտի միաւորէ հիմնականին մը Հայաստանը, Ատրպէյճանն ու Թուրքիան, իսկ լայն իմաստով՝ Կեդրոնական Ասիան պիտի կապէ Եւրո-



Հարաւային Կովկասի մէջ ՆԱԹՕ-ի գրասենեակի ղեկավար Ալեքսանտր Վիննիքով

պայի հետ, ակնառու կերպով ցոյց կու տան այդ հնարաւորութիւնները:

«Անկախ անկէ, թէ ինչպէս կը կոչուին այդ նախաձեռնութիւնները, կարեւոր է, որ անոնք իսկապէս ծառայեն տարածաշրջանի երկիրներու շահերուն: Անոնք պէտք է պայմաններ ստեղծեն բոլոր տարածաշրջանային դերակատարներու տնտեսական եւ տարանցիկ ներուժի լիարժէք բացայայտման համար», - յաւելած է Վիննիքով՝ ընդգծելով, որ այս սկզբունքներն են TRIPP նախաձեռնութեան հիմքին:

ՀՀ Վարչապետին Կողմէ Ուաշինկթընի Աստուածաշունչի Թանգարանին Նուիրաբերուած Աստուածաշունչի Յանձնման Արարողութիւնը



Դեսպան Նարեկ Սկրտչեան եւ Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեան Աստուածաշունչի թանգարանի գլխաւոր տնօրէն, դոկտոր Գարլոս Քամփոնին կը յանձնեն ՀՀ վարչապետի նուիրած Աստուածաշունչի

Ուաշինկթընի Աստուածաշունչի թանգարանին մէջ, Յունուար 9-ին, դեսպան Նարեկ Սկրտչեան մասնակցած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի կողմէ թանգարանին նուիրաբերուած Աստուածաշունչի յանձնման հանդիսաւոր արարողութեան: Միջոցառման ընթացքին դեսպան Նարեկ Սկրտչեան եւ Աստուածաշունչի թանգարանի գլխաւոր տնօրէն, դոկտոր Գարլոս Քամփոն ստորագրած են համապատասխան փաստաթուղթ, որուն համաձայն՝ ՀՀ վարչապետին կողմէ թանգարանին նուիրաբերուած Աստուածաշունչը իր ուրոյն տեղը պիտի գտնէ թանգարանին մէջ եւ 2026

թուականի ընթացքին պիտի դրուի ցուցադրութեան: Աստուածաշունչի յանձնման հանդիսաւոր արարողութեան մասնակցած են նաեւ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ ԱՄՆ Արեւմտեան թեմի առաջնորդ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանը եւ Թեմական Խորհուրդի ատենապետ Դերիկ Ղուկասեանը: Միջոցառման հրաւիրուած էին նաեւ ակադեմական ոլորտը ներկայացնող հիւրեր, տարբեր քրիստոնէական կառույցներու ներկայացուցիչներ, այդ շարքին՝ «Save Armenia» Յուլդայա-քրիստոնէական միութեան գործադիր տնօրէն եւ նախագահ Փօլ Միլհէյը:

Դատական Իշխանութեան Անկախութիւնը Սահմանադրական Արժէք Է Եւ Միաժամանակ Բարձր Պատասխանատւութիւն. ՀՀ Նախագահ



Հայաստանի նախագահ խաչատուրեան հանդէս կու գայ Դատական իշխանութեան օրուան նուիրուած միջոցառման ընթացքին

Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրեան մասնակցած եւ ողջոյնի խօսքով հանդէս եկած է Դատական իշխանութեան օրուան նուիրուած միջոցառման:

«Ժողովրդավարական պետութեան կենսունակութիւնը պայծառաւորուած է ոչ միայն քաղաքական հիմնարկների առկայութեամբ, այլ դրանց իրական արդիւնաւէտութեամբ: Այդ համակարգի առանցքում գտնուում է դատական իշխանութիւնը՝ որպէս սահմանադրական կարգի պահպանման եւ իրաւունքի գերակայութեան գլխաւոր երաշխաւոր:

«Սահմանադրութիւնը իրաւական պետութեան հիմքն է, իսկ դատական իշխանութիւնը՝ այն մեխանիզմը, որի միջոցով այդ հիմքը վերածուում է կենդանի իրականութեան: Դատարանների անկախութիւնը եւ անաչառութիւնը ժողովրդավարութեան ձեւական յատկանիշն են, այլ դրա բովանդակային էութիւնը: Առանց անկախ դատարանների անհնար է ինչպէս քաղաքացու իրաւունքների պաշտպանութիւնը, այնպէս էլ հանրային վստահութիւնը պետական համակարգի նկատմամբ:

«Դատական իշխանութեան նկատմամբ վստահութիւնը ձեւաւորուում է այն ժամանակ, երբ

արդարադատութիւնը ոչ միայն իրականացւում է, այլ նաեւ ընկալւում է որպէս արդար, մատչելի եւ թափանցիկ: Այդ վստահութիւնն է, որ կապում է քաղաքացուն պետութեան հետ եւ ամրապնդում իրաւական պետութեան հիմքերը:

«Դատական իշխանութեան անկախութիւնը սահմանադրական արժէք է եւ միաժամանակ բարձր պատասխանատուութիւն: Այն պահանջում է, որ դատաւորը իւրաքանչիւր որոշում կայացնի բացառապէս օրէնքի եւ սեփական խղճի հիման վրայ՝ զերծ մնալով ցանկացած ազդեցութիւնից: Այդ սկզբունքի պահպանումը վճռորոշ նշանակութիւն ունի ողջ պետական համակարգի հաւասարակշռութեան համար:

«Այս օրը նաեւ առիթ է գնահատելու դատական համակարգի ներկայացուցիչների կատարած ծառայութիւնը: Ձեր աշխատանքը կարեւոր դեր ունի Հայաստանում իրաւունքի գերակայութեան եւ ժողովրդավարական պետականութեան ամրապնդման գործում:

«Վստահ եմ, որ շարունակական եւ հետեւողական ջանքերով մենք կը կարողանանք զարգացնել դատական իշխանութիւն, որը լիարժէքօրէն կը կատարի իր սահմանադրական առաքելութիւնը եւ կը ծառայի հանրային շահին:»:

Նախարարի Հաւաստմամբ՝ Ծիծեռնակաբերդի Նորոգումը Ապրիլ 24-ին Աւարտած Պիտի Ըլլայ

Ծիծեռնակաբերդի յուշահամալիրն ու թանգարանը այցելուներու համար այս ընթացքին չեն փակուած, իսկ մեկնարկած վերանորոգումը պիտի աւարտի նախանշուած ժամկէտին:

Այս մասին ըսաւ ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ մարմնամարզի նախարար Ժաննա Անդրէասեանը:

«Յուշահամալիրը եւ թանգարանը բաց են եւ չեն փակուել որեւէ օր, որեւէ ժամ, այդ թւում՝ Ապրիլի 24-ին», - հաւաստեց նախարարը:

Անդրէասեան մանրամասնեց, որ ներկայիս մեկնարկած է Ծիծեռնակաբերդի 3 մուկթերու սալերու տեղադրումը եւ մասնագիտական հանրոյթին հետ համագործակցութեամբ բոլոր անհրաժեշտ աշխատանքները կ'իրականացուին պատշաճ որակով:

«Որեւէ մտահոգութիւն մեր



Նախարար Ժաննա Անդրէասեան

քաղաքացիները կարող են չունենալ. ովքեր ուզում են այցելել՝ յուշարձանն այսօր էլ բաց է, իսկ Ապրիլի 24-ին աշխատանքներն աւարտուած կը լինեն», - եզրափակեց նախարարը:



Վլատիմիր Սոլովիով Խօսած Է Չայաստանի Դէմ

Շարունակուած էջ 1-էն

հակառակ պարագայում չէր ջղաձգուէի։ Հինգերորդ շարասիւսն էլ՝ նախկին նախագահները, հոգեւորականները, օլիկարխ փրկիչները, լաւ կը լինի կողմնորոշուեն՝ ՌԴ ազդեցութեան գօտու վերածուելու եւ ռազմական ուժով ՀՀ-ն հնազանդ դարձնելու առաջարկների մասով։ Զատացուի, որ իրենք էլ կողմ են սոլովիովեան մօտեցումնե-

Միրզոյեան Եւ Ռուպիօ Չաստատեցին

Շարունակուած էջ 1-էն

քննարկած են «2025 թուականի Օգոստոս 8-ին Ուաշինկթընի խաղաղութեան զազաթնաժողովին ընթացքում բերուած պայմանաւորուածութիւններու իրագործման ընթացքը։ Երկու կողմերն ալ ընդգծել են խաղաղութեան հետագայ ինստիտուցիոնալացման կարեւորութիւնը եւ անդրադարձած են այդ ուղղութեամբ ձեռնարկուող

ըին ու իրենց վերարտադրութիւնը միայն այդպէս են հնարաւոր համարում։

«Սոլովիովները համարում էին, որ հայերը գնալու տեղ չունեն։ Հարց՝ իսկ հիմա ո՞ւմ նաւերն են սուզոււմ եւ ո՞վ՝ ո՞ւր է գնում։

«Ժողովուրդ ջան, լաւ օր ձեզ, սա հիմնաւորում է, որ ճիշդ ճանապարհին ենք. ու թող Աստուած օրհնի Հայաստանը»,‑ գրած է Սարգսեան։



քայլերուն»։

Նախարար Միրզոյան գրառում կատարած է պատուաւոր հիւրերու մատենին մէջ։

ՀՀ արտաքին գործոց նախարարը եւ ԱՄՆ պետքարտուղարը հաստատած են «Թրամփի ուղի՝ յանուն միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման» (ԹՐԻՓՓ) ծրագիրին համար Հայաստան-ԱՄՆ կենսագործման շրջանակին վերաբերեալ համատեղ յայտարարութիւնը։

«66-ի Ստուերը»

Շարունակուած էջ 2-էն

պատրաստ է աւելի ազրեսիւ գործողութիւնների՝ առանց ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհրդից կաշկանդուելու։

3. Տնտեսական ազատութիւն. Կլիմայական եւ առողջապահական պայմանագրերից հրաժարուելը հնարաւորութիւն է տալիս ԱՄՆ-ին օգտագործել իր ողջ արդիւնաբերական պոտենցիալը՝ տնտեսական մրցակցութեան մէջ Զինաստանին յաղթելու համար։

Դոկտրինալ շրջադարձ. ինքնիշխանութիւնն ընդդէմ գլոպալիզմի
Ուաշինկթոնի կողմից 66 միջազգային կազմակերպութիւննեից եւ համաձայնագրերից հրաժարումը շատերի համար հնչում է որպէս աշխարհակարգի մահախօսական։ Սա քաոսային նահանջ է, այլ նախագահ Թրամփի վարչակազմի կողմից իրականացուող, այսպէս կոչուած « ինտերվենցիոնիստական իզոլյացիոնիզմի» դոկտրինալ յարձակում։ Տրամաբանութիւնը շատ պարզ է՝ կեդրոնում ԱՄՆ-ի շահերն ու անվտանգութիւնն են եւ թէ՛ չկայ պարտաւորութիւն միջազգային կառոյցների առջեւ, ապա չկայ նաեւ այդ շահերն, ընդհուպ ուժի միջոցով, պաշտպանելու համար պատասխանատուութիւն։
Ինչո՞ւ հիմա
Հարց է առաջանում՝ ինչու հենց հիմա։ Պատասխանը թաքնուած է աշխարհում տեղի ունեցող խոր քային, գործընթացների մէջ, որոնք ԱՄՆ-ի վարչակազմը գնահատում է որպէս իր շահերի ու անվտանգութեան ակնառու սպառնալիք։ Մասնաւորապէս ԱՄՆ-ի այս տեկտոնիկ տեղաշարժի հիմնական կատալիզատորը դարձաւ ոչ միայն Զինաստանի աճող տնտեսական էքսպանսիան այն գօտիներ, որն ԱՄՆ-ն աւանդաբար համարում է իր ազդեցութեան տարածքը, այլեւ Ռուսաստանի կողմից Ուքրանիայում իրականացուած երկարատեւ

Չարաւային Կովկաս. Ուաշինկթօնեան համաձայնագրի եւ TRIPP-ի նոր էֆեկտը
Այս ազրեսիւ դոկտրինի ֆօնին բոլորովին նոր լոյսի ներքոյ է յայտնոււմ 2025թ. Օգոստոսին Ուաշինկթոնում Թրամփի հովանու ներքոյ հայ-ատրպէյճանական խաղաղութեան համաձայնագրի նախաստորագրումը եւ TRIPP նախագծի հռչակումը։ 2025-ին դա գուտ դիւանագիտական տակտիկական ձեռքբերում էր։ 2026-ի առաջին տաս օրերի յազցեցած իրադարձութիւնների համատեքստում այն ստանում է ռազմավարական նոր նշանակութիւն՝ երկու իմաստով։ Առաջին՝ ստիպում է Ատրպէյճանին աւելի կանխատեսելի դարձնել իր վարքագիծը։ Հիմա արդէն պարզ է, որ Ուաշինկթոնը, Ատրպէյճանին պարտադրելով այս համաձայնագիրը՝ Պաքուին գրկում է մանեւրից։ Այս իմաստով TRIPP-ը ոչ թէ պարզապէս տնտեսական ու կոմունիկացիոն տարածաշրջանային ծրագիր է, այլ « աշխարհաքաղաքական խաբիս»։ Ատրպէյճանը, իր տոտալիտար ռեժիմով, ներգրաւուելով ամերիկեան ենթակառուցուած քային այս նախագծում, ստիպուած է լինելու գուսպ մնալ նաեւ Ռուսաստանի կամ Իրանի հետ խաղերում, քանի որ ԱՄՆ-ն այժմ ցոյց է տալիս, որ պատրաստ է կոշտ պատժել իր շահերը շրջանցողներին՝ հենց յատկապէս տոտալիտար իրզմի գործօնը խաղարկելով։ Երկրորդ՝ TRIPP նախագիծը

Սոլովիովի Չակահայ Ելոյթը

Շարունակուած էջ 1-էն

րոշում մինչեւ օրս չէ արտայայտած այդ զգուշացումներուն վերաբերեալ. նկատի առնելով որ Եւրոպական Միութեան կազմէն ներս մուտք գործելը կը պահանջէ մէկ տասնամեակ կամ աւելի ժամանակ։ Սոլովիովի յայտարարութիւնները ամբողջովին նոր մակարդակի վրայ կը դնեն Ռուսաստանի վերաբերմունքը հայաստանի նկատմամբ։

Ըստ Երեւոյթին, Վենեզուէլայի վրայ յարձակումը եւ Նախագահ Թրամփի ծրագիրները Տաքիմարքային պատկանող Կրիւլանտ կղզիին տիրաճալու ուղղութեամբ, բաւարար արդարացում են, որպէսզի Ռուսաստան եւս իր ռազմական կարողութիւնները օգտագործէ Չայաստանի եւ նաեւ Կեդրոնական Ասիոյ երկիրները իր ազդեցութեան ուղեծիր վերադարձնելու համար։

Քրեմլինին մերձաւոր շրջանակները մինչեւ օրս գիտակցած պէտք էր ըլլային, որ պաշտօնական Երեւանի ու ընդհանրապէս Չայութեան մօտ Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունքին մէջ շրջադարձային եղան Արցախեան 44օրեայ պատերազմը եւ ապա Լեռնային Ղարաբաղի հայաթափումը։ Ռուսաստան իր վարած անհեռատես քայլերուն պատճառաւ կորսնցուց իր հեղինակութիւնը Չարաւային Կովկասի տարածաշրջանէն ներս եւ եթէ տակաւին ունի որոշ ազդեցութիւն, այդ ալ շնորհիւ Չայաստանին է, ուր ան կը պահէ ռազմակայան եւ ունի տնտեսական բաւական մեծ լծակներ։ Սոլովիովներու սպառնալիքները

Չարաւային Կովկաս. Ուաշինկթօնեան համաձայնագրի եւ TRIPP-ի նոր էֆեկտը
Այս ազրեսիւ դոկտրինի ֆօնին բոլորովին նոր լոյսի ներքոյ է յայտնոււմ 2025թ. Օգոստոսին Ուաշինկթոնում Թրամփի հովանու ներքոյ հայ-ատրպէյճանական խաղաղութեան համաձայնագրի նախաստորագրումը եւ TRIPP նախագծի հռչակումը։ 2025-ին դա գուտ դիւանագիտական տակտիկական ձեռքբերում էր։ 2026-ի առաջին տաս օրերի յազցեցած իրադարձութիւնների համատեքստում այն ստանում է ռազմավարական նոր նշանակութիւն՝ երկու իմաստով։ Առաջին՝ ստիպում է Ատրպէյճանին աւելի կանխատեսելի դարձնել իր վարքագիծը։ Հիմա արդէն պարզ է, որ Ուաշինկթոնը, Ատրպէյճանին պարտադրելով այս համաձայնագիրը՝ Պաքուին գրկում է մանեւրից։ Այս իմաստով TRIPP-ը ոչ թէ պարզապէս տնտեսական ու կոմունիկացիոն տարածաշրջանային ծրագիր է, այլ « աշխարհաքաղաքական խաբիս»։ Ատրպէյճանը, իր տոտալիտար ռեժիմով, ներգրաւուելով ամերիկեան ենթակառուցուած քային այս նախագծում, ստիպուած է լինելու գուսպ մնալ նաեւ Ռուսաստանի կամ Իրանի հետ խաղերում, քանի որ ԱՄՆ-ն այժմ ցոյց է տալիս, որ պատրաստ է կոշտ պատժել իր շահերը շրջանցողներին՝ հենց յատկապէս տոտալիտար իրզմի գործօնը խաղարկելով։ Երկրորդ՝ TRIPP նախագիծը

ոչ մէկ ձեւով կը նպաստեն Չայաստան-Ռուսաստան յարաբերութիւններուն, եւ ընդհակառակը աւելի կը խորացնեն յառաջացած ճեղքը։

Վլատիմիր Սոլովիով հրապարկային սպառնալիքներէն օրեր ետք, լուռ են Չայաստանի ընդդիմադիր շրջանակներն ու լրատուամիջոցները, որոնք անխնայ կերպով կը քննադատեն իշխանութիւններու իւրաքանչիւր քայլն ու առած որոշումները, իսկ պատրաստ են անտեսելու Չայաստանի անկախութեան ու ինքնիշխանութեան դէմ ուղղուած արտաքին սպառնալիքները, երբ անոնք կու գան Ռուսաստանէն։ Անոնցմէ շատերուն համար իշխանութեան հասնելու ամենէն արագ ճանապարհն է Ռուսաստանի միջամտութիւնը՝ ռազմական կամ այլ եղանակներով։

Առաջին անգամ չէ որ Վլատիմիր Սոլովիով հանդէս կու գայ հակահայ ելոյթներով ու այդ պատճառաւ անոր հաղորդումները չեն սփռուիր Չայաստանի տարածքին։ Սակայն Ռուսական ալիքները հասնելի են ժողովուրդին եւ որքան մօտեման խորհրդարանական ընտրութիւնները անոնք պիտի փորձեն աւելի ու աւելի ազդել Չայաստանեան հանրային կարծիքին վրայ՝ իշխանութեան բերելու համար իրենց ենթարկուելու պատրաստ ուժերուն։

Այդ որոնումներից ծնուեց նոր մօտեցում: Նա սկսեց իր ստեղծագործութիւններում օգտագործել թելեր՝ սկզբում ոչ որպէս ասեղնագործութիւն, այլ որպէս կոլաժի տարրեր: Թելն աստիճանաբար դարձաւ նրա արուեստի լեզուի մի մասը: Իր արուեստի մէջ Արմինէն սկսեց համադրել թելը, տեքստիլը, թուղթը, պապիրէ-մաշէն, տարբեր կտորներ՝ ստեղծելով բազմաշերտ



եւ գաղափարական աշխատանքներ: Չնայած մասնակցել է տարբեր դասընթացների, Արմինէի ճանապարհի մեծ մասն ինքնուս է եղել: Նա սովորել է գրքերից, համացանցից, շփուել օտարագգի մասնագէտների հետ, մասնակցել տարբեր երկրներում կազմակերպուած օնլայն դասընթացներին:

Այսօր Արմինէ Աթոյեանը շարունակում է իր կրթութիւնն ու զարգացումը՝ ուսումնասիրելով ոսկեթել ասեղնագործութիւն եւ եկեղեցական ասեղնագործութիւն՝ ռուսական դպրոցի փորձի հիման վրայ:

«Ինձ թւում է՝ ամենակարեւոր բանը աշխատասիրութիւնն է»:

Նրա պատմութիւնը վկայում է, որ գիտութիւնն ու արուեստը կարող են համատեղուել մէկ մարդում մէջ, իսկ որոնումն ու աշխատասիրութիւնը կարող են մարդուն հասցնել ինքնարտայայտման ամենախորը ձեւերին:

«Ես միշտ ասում եմ՝ արուեստը կարող է բուժել, կարող է ցաւը թեթեւացնել»:

նաեւ խաչկարը՝ մեծ սիրով ու հետաքրքրութեամբ:

Նախշուն Աւագեանը մասնագիտութեամբ դիզայներ է: Կարում է, գործում, նկարում՝ մի խօսքով՝ զբաղւում է արուեստի տարբեր ճիւղերով: Արցախում նա ունեցել է ձեռագործ աշխատանքների փոքրիկ, բայց արդէն ճանաչված բիզնես: Նրա աշխատանքները լայն տարածում ունեին, պատվերներ էին ստացվում ոչ միայն Արցախից, այլեւ Հայաստանի Հանրապետութիւնից: Արցախից դուրս գալու ընթացքում Նախշունը չի կարողացել իր պատրաստի աշխատանքները բերել իր հետ, սակայն վստահ է՝ ամենակարեւորը չի կորել:

«Էն գիտելիքները, էն ուժը, որը ես ունէի, չի կորել: Կարծում եմ՝ դա կը կրկնապատկուի»:

Ձեռագործութեամբ Նախշունը զբաղւում է շատ վաղուց. դեռ 6-7 տարեկանից: Իսկ որպէս պիզնես՝ իր աշխատանքը սկսել է 18 տարեկանից: Նրա առաջին քայլերը ծնուել են անհրաժեշտութիւնից. տանը ունենալով երկու փոքրիկ երեխայ՝ նա հնարաւորութիւն չուներ տնից դուրս աշխատելու:

«Որոշեցի ինչ-որ բան սկսել տնից: Տատիկից մնացած սովետական կտորներով եւ տանը եղած սովորական ռեզինով մագալաններ սկսեցի կարել: Սկզբում վաճառքը կատարւում էր նոյնիսկ ինքնարժեքից ցածր՝ 200 դրամով: Սակայն հենց այդ փոքր քայլերն էին, որ նրան մեծ ուրախութիւն բերեցին: Յիշում եմ իմ առաջին մի մեթր վիլիուրի գումարը, որը վաստակել էի իմ աշխատանքով. դա ինձ համար մեծ երջանկութիւն էր»:

Արուեստի նկատմամբ ունեցած հետաքրքրութիւնն ու գիտելիքները զարգացնելու համար, Նախշունը այսօր մասնակցում է 2021 թուականին վարպետի կոչում

ստացած Արմինէ Աթոյեանի արուեստի խմբակի դասերին:

Չնայած հայկական կիրառական արուեստի հարուստ ժառանգութեանը՝ ասեղնագործութիւնը շարունակում է մնալ ամենաքիչ ուսումնասիրուած եւ կիրառուող ոլորտներից մէկը: Մասնագէտների կարծիքով՝ յատկապէս հայկական ասեղնագործութիւնն աչքի է ընկնում իր բազմաթանրութեամբ եւ տարածաշրջանային բազմազանութեամբ՝ պատմական Հայաստանի գրեթէ իւրաքանչիւր գաւառ ունեցել է իրեն յատուկ ասեղնագործական դպրոցը: Պատմական աղբիւրների համաձայն՝ Հայաստանի տարածքում ձեւաւորուել է ասեղնագործութեան շուրջ ութ դպրոց՝ ներառեալ թէ՛ Արեւմտեան, թէ՛ Արեւելեան Հայաստանի աւանդույթները: Սակայն այդ հարուստ ժառանգութիւնից այսօր պահպանուել եւ ուսումնասիրուել է միայն չնչին մասը: Թէեւ Մարաշի ասեղնագործութիւնը համեմատաբար լայն տարածում է գտել, շատ այլ դպրոցներ՝ Վանի, Ուրֆայի, Այնթափի եւ այլ տարածաշրջանների ասեղնագործական ձեւերը, շարունակում են մնալ գրեթէ անյայտ եւ դժուար վերականգնուող:

Ոլորտի զարգացման իրենց ներդրումն են ունեցել մի քանի անհատներ՝ Լուսինէ Մխիթարեանը՝ իր գրքաշարերով, Սերիկ Դաւթեանը, Նազիկ Աւագեանը, Վարդ Բդոյեանը եւ ուրիշներ: Սակայն մասնագէտները նշում են, որ անհատական ջանքերը բաւարար չեն՝ նման բարդ եւ աշխատատար արուեստը պահպանելու եւ զարգացնելու համար:

Ասեղնագործութիւնը պահանջում է մեծ ժամանակ եւ համբերութիւն. օրինակ՝ մէկ ժանյակային աշխատանք կարող է տեւել

Շաբ.ը էջ 14

You are cordially invited to a
Dinner party & Bingo



MADZUNOV KUFTA

Hosted By:
Homenmen Ladies Auxiliary

16 JANUARY at 7:30 PM
Donation \$50

AEBU Center
1060 Allen Ave., Pasadena, CA 91104

RSVP:
Knr: 626-491-7899
Lena: 818-395-7967

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՌԵՍԵԱՐՏ ՔԻՓԼԻՆԿԻ ՄԱԽՈԼԱՆ 90-ԱՄՆԱԿԻՆ

ՅԱԿՈԲ ՏԻՒՆԵԱՅԵԱՆ

1907-ին Միջազգային գրա-կանութեան Նոպէլեան մրցանակի արժանացած անգլիացի առաջին գրողը՝ ՌԵՍԵԱՐՏ ՔԻՓԼԻՆԿԻ (Rudyard Kipling, Պոմպէյ, Հնդկաս-տան, 30 Դեկտեմբեր 1865 ... Լոն-տոն, 18 Յունուար 1936), որուն գրական արձակը ե՛ւ բանաստեղ-ծութիւնը գրեթէ համահաւասար ուժականութեամբ, 19-րդ դարու վերջերուն եւ 20-րդ դարու սկիզբ-ները մանաւանդ, իր անունին շուրջ կազմաւորեցին լայն ժողովրդակա-նութիւն՝ մեկնելով իր ուշագրաւ գործերէն. սակայն աւելի ուշ իր համբաւը կրեց ելեւէջային փոփո-խութիւններ՝ ըստ ժամանակաշր-ջանի քաղաքական ու ընկերային միջնորդութին ու անոր յառաջացու-ցած քաղաքական տեղաշարժերուն:


Այս բոլորէն վեր՝ բանաստեղծա-կան ու կարճ պատմութեա՜քներու, նաեւ նորավէպի մէջ հրափայլ տաղանդ մըն էր ան ապաքէն, ինչ փոյթ, որ ան հռչակուած էր հակիլ (PHOTO 2, ՌԵՍԵԱՐՏ ՔԻՓԼԻՆԿԻ) իր ժամանակնե-րու բրիտանական իմփերիալիզմին. իմփերիալիզմ, որ իր կրունկին տակ էր առած գրողին Պոմպէյ ծննդավայրը, Հնդկաստանն ամբողջ՝ իբրեւ բրիտա-նական մեծ գաղութ:

Փլիլիսոփայ գրող մը ՌԵՍԵ-եարտ Քիփլինկ, որ նախընտրեց հաւատալ լաւագոյնին՝ իւրաքան-չի՛ւր մարդու մէջ, վասնզի այդ լաւագո՛յնն է որ պիտի փրկէ փոր-ձանքն ու վտանգը գալիք: Ան յստակացուց իր հաւատամբը Աս-իոյ եւ Արեւմուտքին նկատմամբ, համոզուած ըլլալով, որ առաջինը պիտի չքաղաքակրթուի երկրոր-դին մեթոտներէն ետք, եւ ըստ իր համոզման՝ շատ Ասիաներ կան եւ Ասիան շա՛տ է հինաւուրց:

Աւելին. փայլակնացայտ քան-քար մը Քիփլինկ, որուն համար անգլիացի վիպագիր եւ Քիփլինկի համաքաղաքացի ձորճ Օրուէլ (1903-1950) յախուռն արտայայտութեամբ մը գայն պիտի կոչէր «մարգարէ մը բրիտանական իմփերիալիզմի», մինչ 19-րդ դարու Ռէպլիզմի մեծագոյն ներկայացուցիչներէն՝ ամերիկացի գրող Հէնրի Ճէյմս (1843-1916) պի-տի ժպրհէր բարձրագոռ յայտարա-րելու, թէ «Քիփլինկ գինք ուժգին կը հարուածէ՝ ժամանակի ամենէն ամբողջական հանճարը նկատուե-լուն համար»:

Քիփլինկի բանաստեղծու-թիւններուն արգասիքը՝ թիւով 525, որոնց շարքին՝ «Եթէ» քերթուա-ծը, համաշխարհային համբաւ ու ճանաչում բերաւ իր վաստակին, թարգմանուելով բազմաթիւ լե-զուներու, նաեւ հայերէնի՝ Լեւոն Շանթի, Մուշեղ Իշխանի եւ ուրիշ-ներու կողմէ:

Ճոն Լոքուըտ Քիփլինկի եւ Ալիս Մաքտոնալտ Քիփլինկի ըն-տանեկան յարկին տակ հասակ առած ապագայ մեծ գրողը ունեցած է սակայն տուայտագին մանկութիւն: Շատերու կարծիքով, հնդկական համանուն ՌԵՍԵԱՐՏ գետի անու-նով մկրտուած փոքրիկն Քիփլինկ՝ որուն ծնողները իրարու հանդի-պած էին այդ գետին եզերքը, մինչեւ վեց տարեկան, հնդիկ դա-սատուի մը խնամքին տակ հնդկե-րէն սորվելէ յետոյ, փոքրիկ իր քրոջ հետ կը ղրկուի Բրիտանիա, գիշերօթիկ դպրոց մը, ուր կ'են-թարկուի դաժան սեղմումներու՝ ամբարտաւան «դաստիարակներ»ու



հսկողութեան տակ: Իր աչքին տկար տեսողութիւնը գինք գրկելու աս-տիճան հեռու կը պահէ յառաջա-պահ դիրք ունենալէ զինուորական մարզին մէջ, որով վերջապէս ան 1881-ին կը ստիպուի վերադառնալ իր ծնողաց քով՝ Լահոր եւ կը սկսի իր լրագրական ասպարէզին, նախ իր լրագրական ասպարէզին, նախ «Civil & Military» թերթին (1882-1887), ապա աշխարհահռչակ ու տարածուն «Pioneer » թերթին (1887-1889) մէջ գրելով հեքիաթ-ներ, պատմութեա՜քներ եւ քերթ-ուածներ: Այստեղ ան բաւական ժողովրդականութիւն կը շահի՝ շնորհիւ իր բանաստեղծութեանց մէջ հիւմորով թաթաւուն հա-մապրումներուն եւ երգիծական առինքնող շունչին: 1889-ին՝ 24 տարեկանին, երբ կը վերադառնայ Անգլիա, արդէն ան կը համարուէր ազգային «գրական հերոս» մը:

Սակայն Անգլիա վերադառ-նալէ առաջ՝ 1886-ին, լոյսի բարի-քին կու գայ իր քերթուածներուն երախայրիքը՝ «Գաւառային եր-գեր» խորագիրով, իսկ 1887 - 1889 թուականներուն՝ իր գրական բեր-քի ամենէն բեղուն տարիներուն, իրմէ կը հրատարակուին պատմ-ուածքներու վեց հատոր, առաջի-նը՝ «Բլուրներու Անպաճոյճ Զրոյց-ներ» (1888), Հնդկաստանի կեան-քին կապուած յուշագրութիւննե-րու եւ իր ծննդավայրին հանդէպ բուռն սէրով ակադճուն դրուագնե-րով, որոնք հարուստ են թելադրա-կանութեամբ ու կեանքի փորձա-դաշտէն բերուած իմաստասիրա-կան գեղումներով: 1889-ի Հոկտեմ-բերին, երբ ան Անգլիա կը վերա-դառնայ Միացեալ Նահանգներու ճամբով, արդէն ինքզինք կը գտնէ իբրեւ տաղանդաւոր ու հմտիմաց գրող մը եւ ամբողջութեամբ կը նուիրուի գրականութեան: Այս-տեղ, Լոնտոնի մէջ, իր «Հնդկական երկաթուղիներու Շարք»ին վե-րահրատարակութիւնը՝ ներառեալ «Զինուորներ Երեք», «Սեւի եւ ձերմակի Մէջ» եւ «Յարգանցի Ուրուականը», առաւել համբաւ կ'ապահովեն իրեն: Յաջորդ տարի՝ 1890-ին հրատարակուած «Լոյսը՝ Որ Մարեցաւ» խորագիրով իր առաջին վէպը կը համարուի ամե-նայաջող իր գործերէն մին, որուն 1892-ին կը յաջորդէ «Զօրանոցա-յին Երգեր» գեղօնները:

Նոյն տարին ամուսնութիւն կը կնքէ ամերիկացի Քարոլին Պալեսթիէի հետ՝ յետագային բախտաւորուելով երկու դուստր եւ մէկ մանչ զաւակներով: Մեղրա-լուսինը գիրենք կը տանի մինչեւ ձափոն, սակայն անոնք կը վերա-դառնան այս անգամ կնոջ բնակա-րանը՝ Վերմոն, ուր կը մնան մինչեւ 1899 թուական, ուրկէ Քիփլինկ այս անգամ առանձին կը վերա-դառնայ Անգլիա:

19-րդ դարու վախճանէն առաջ Քիփլինկ հրատարակութեան յանձ-նած էր «Եօթը Ծով» բանաստեղ-ծութիւններու ժողովածոն (1896), տակաւ առ տակաւ հանրայայտ դառնալով երեխաներու համար գրուած իր հեքիաթներով, յատկա-պէս շամբրուտ եղէգնապուրակնե-րու մէջ հնդիկ մանուկի՝ Մաուկլիի մասին պատմութիւններով, որոնք յետագային ամփոփուած են «Եղէգ-նապուրակներու Գիրքը» եւ «Եղէգ-նապուրակներու Երկրորդ Գիրքը» յաջորդական հատորներու մէջ՝ 1894-ին եւ 1895-ին:

1901-ին լոյս կը տեսնէ իր «Քիմ» վէպը, որ անգլիացի ու այլ գրաքննա-դատներու կարծիքով կը համարուի Քիփլինկի գլուխ-գործոցը:

«ՔԻՍ» ՎԵՊԻՆ ՆԻԻԹԸ

Քիմը որբացած մանչուկն է իրլանտացի զինուորի եւ նոյնպէս իրլանտացի աղքատ մօր մը, որոնք մահացած են ծայրայեղ թշուառու-թեան մէջ: Թափառական կեանք մ'ապրելով Հնդկաստանի մէջ՝ որ դեռ բրիտանական գաղութ էր 19-րդ դարու վերջերուն, Քիմ իր ապրուստը կը հոգայ մուրալով՝ Լահորի փողոցներուն մէջ: Կը բա-րեկամանայ տարիքոտ թիպէթցի Լամա անունով մարդու մը եւ կ'ըլլայ անոր աշկերտը կամ հետե-ւորդը, կ'ընկերանայ անոր ճամ-բորդութիւններուն: Ծամբորդու-թիւններու ընթացքին, Քիմ դիպ-ուածով ականատես եւ ականջա-լուր կ'ըլլայ յիշեալ դարու վերջա-ւորութեան ոռուսական եւ բրիտա-նական կայսրութիւններուն միջեւ գոյութիւն ունեցող առճակատում-ներուն՝ Աֆղանիստանի շրջակայ վայրերու մէջ: Ան ուժ կ'առնէ Մահպուպ Ալիէն եւ պատգամ մը կրելով կը փոխանցէ բրիտանական գաղտնի սպասարկութեան գլխա-ւոր պատասխանատուին, որ կը գտնուէր Հնդկաստանի հիւսիսը Հարեանա նահանգի Ումպալա շրջանին մէջ: Քիմի ճամբորդու-թիւնը Լամայի հետ Պենկլատեչէն

դէպի Քապուլ ճամբուն վրայ կը համարուի առաջին մեծ արկա-ծախնդրական ճամբորդութիւնը սոյն վէպին մէջ: Լամա կը հոգայ Քիմի ուսման ծախսերը եւ փոքրի-կը տակաւ տեղեակ կը դառնայ բրիտանական լրտեսական ցանցի լուրերէն: Երեք տարի ուսանելէ յետոյ ան կը կոչուի կառավարական պաշ-տօնի: Վերջաւորութեան Լամա կ'անդ-րադառնայ թէ ինք մոյլորած էր իր այդ գործով: «Նետագետ»ը («River Of The Arrow») իր փնտռուքը տեղի կ'ունենայ տափաստաններու վրայ, ո'չ թէ լեռներու մէջ: Այստեղ է որ Քիմը եւ Լաման կը բուժուին ու կ'առողջա-նան՝ իրենց տաժանելի ճամբորդու-թենէն ետք: Քիմ կը վերադարձնէ բրիտանական փաստաթուղթերը եւ Մահպուպ Ալին կու գայ խուզարկելու Քիմը: Լամա կը գտնէ իր գետը եւ կը հասնի իր լուսաւորութեան: Քիմ եւս ի վերջոյ կը միանայ Լամային՝ ըսելու. «Ես մեծաւոր մը չեմ, ես քու ծառադ եմ»:

ՌԵՍԵԱՐՏ Քիփլինկի գրա-կան ժառանգութիւնը ոչ միայն տարածեց իր ազդեցութիւնը յե-տագայ գրողներու մտածումներուն, աշխարհաընկալումներուն վրայ, այլ մնաց առանձնակի, արտասո-վոր մեծութիւն: Որովհետեւ՝ ինչ-պէս կը հաստատէ հնդիկ մեծանուն գրող Ռ. Ք. Նարայան (1906-2001) իր գրական յուշերուն մէջ, թէ «... Քիփլինկ շատ աւելի լաւ ըմբռնո-ղութիւն ցոյց տուած է անտառի կենդանիներու մտածողութեան նկատմամբ...», ինչ որ կը հատէ գերմարդկային կարողականութեան սահմանը...:

Իր «Եթէ» բանաստեղծու-թիւնը՝ ինչպէս յիշեցինք, բոլոր ժամանակներուն հնչող ու չմեռնող ղողանջ մըն է, որ խտացումն է, ամփոփումը իր ապրած կեանքի դառն եւ ուրախ տարիներուն, չցամքող աղբիւրի նման մնայուն խրատական մը աշխարհի քաղա-քակիրթ ազգերուն:

Շար.ը էջ 14

Հայ Գիլիկիա Աւետարանական Եկեղեցի
Armenian Cilicia Evangelical Church

ARMEN AROYAN LIBRARY

ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԵՍ

BOOK SIGNING

Մարտիրոս Կերթմենեանի Հոգեւոր Ապրումները
Վերապատուելի Գեորգ Թրեան
Mardiros Gertmenian's Spritual Perspective
Rev. Kevork Terian
Գիրքը Կը Ներկայացնէ
Փրոֆ. Վահրամ Շեմմասսեան
The book will be presented by
Prof. Vahram Shemmassian (CSUN)
Գեղարուեստական Յայտագիր
Որպաթ, Յունուար 30, 2026, Երեկոյեան Ժամը 7:30ին
Friday, January 30, 2026 7:30 p.m.
339 S. Santa Anita Avenue
(South Altadena Drive) near Del Mar Blvd. Pasadena, CA 91107

Մուտքը Ազատ
RSVP 818-618-3708 or 714-488-1288
Հիւրասիրութիւն

«Անիի Անյայտ Որմնանկարները» Ցուցահանդեսը Պոլսոյ Մէջ



Յունուարի 9-ին, հանդիսաւոր կերպով բացուեմը կատարուեցաւ «Անիի անյայտ որմնանկարները» կարգախօսով ցուցահանդէսը Մխիթարեան վարժարանի սրահին մէջ: Այս շահեկան ցուցահանդէսը՝ նոյն յարկի տակ միաւորեց արուեստի ու մշակոյթի սիրահարները, որոնք ուշադրութեամբ դիտեցին պատմական Անի մայրաքաղաքէն մինչեւ մեր օրերը հասնող լուսանկարչական խորհրդաւոր «Մասունք»ները:

Ցուցահանդէսը՝ կեդրոնանալով Անիի նուազ ծանօթ որմնանկարներու վրայ, մեծ հետաքրքրութիւն ստեղծեց, քանի որ՝ առաջին անգամ ըլլալով, հանրութեան ներկայացուցան Աշքալիոցի ցարդ չի հրապարակուած լուսանկարները: Անոնք կը ցոյցնէին ոչ միայն Անիի ճարտարապետական շքեղութիւնը, այլ նաեւ բազմաշերտ մշակութային ժառանգութիւնը, որ ձեւաւորուած է դարեւրու ընթացքին:

Ցուցահանդէսի պաշտօնական բացման ընթացքին հետազօտող, գրող եւ լուսանկարիչ Վետաթ Ազաեոզի պատմեց Անիի վերաբերեալ իր երկարատեւ հետազօտութիւններու

մանրամասնութեանց մասին, ըզգծելով այդ որմնակարները պահպանելու անհրաժեշտութիւնը:

Բացման արարողութենէն ետք ցուցադրուեցաւ Աքչանոզի եւ Եալչըն Ելէնձէի համատեղ նկարահանումով պատրաստուած «Արարատ եւ Անի» վաւերագրական ժապաւէնը, որ՝ մեծ գնահատանքի արժանացաւ ներկաներուն կողմէ: Յաջորդեց կարճատեւ քննարկում մը, կեդրոնանալով Անիի պատմական նշանակութեան, որմնակարներու զեղարուեստական արժէքի եւ վերոյիշեալ վաւերագրական ժապաւէնի ստեղծման գործընթացի վրայ: Ապա Տիկին Թալին Էրկիւնեւ-Կազեր Մխիթարեան ընտանիքի անունով շնորհակալութիւն յայտնեց:

Ներկաները՝ համակարծիք էին որ ցուցահանդէսը եւ վաւերագրական ժապաւէնը շատ լաւ ձեւով իրագեկեցին Անատոլիոյ հասարակաց մշակութային ժառանգութեան մասին, ամբողջացնելով կարեւոր բաց մը, թէ պատմական եւ թէ զեղարուեստական առումով:

Դիտել տանք որ սոյն ցուցահանդէսը երկու օր եւս բաց մնաց այցելուներուն առջեւ, թէ Յունուար 10-ին եւ թէ 11-ին:

Կոմիտաս Վարդապետին Նուիրուած Գեղարուեստական Տպաւորիչ Չեռնարկ



Յունուարի 9-ին, Պոլսոյ Տատեան վարժարանի «Տիգրան Կիւլմեզկիլ» սրահը դարձաւ ժամադրովայնը բոլոր անոն որոնք կը սիրեն հայ մշակոյթը եւ առանձնապատուկ պաշտամունք ունին Կոմիտասի նկատմամբ:

Յայտագիրը վարեց խոստմնալից երիտասարդուհիներէն Նորա Իփէքճի: Ան ընդգծեց երաժշտութեան միաւորող ոյժը եւ մշակութային ժառանգութիւնը պահպանելու մէջ հաւաքական ջանքերուն կարեւորութիւնը:

Նախ ցուցադրուեցաւ «Քիւթահացի Կոմիտաս եւ այդ դիմանկարի պատմութիւնը» անունով ժապաւէն մը: Ապա տեղի ունեցաւ քննարկում մը՝ մասնակցութեամբ Ուլունայ Թիւրքքանի ու Պէսաէ Քապաքի, որոնք իրենց դիտարկումներով, անդրադարձան Կոմիտասի կեանքի ուշագրաւ դրուագներուն ու անոր ստեղծած երաժշտական մեծ ժառանգութեան: Այդ բոլորը արժեւորելով յատկապէս Փանոս Թերլեմեզեանի կողմէ ստեղծուած «Կոմիտաս» դիմանկարի խորհրդաւոր համապատկերի վրայ: Յայտագիրը շարունակցուեցաւ: Երաժշտութեան ուսուցիչ Արի Պարութողլուի մականին տակ աշակերտները մեկնաբանեցին «Քելէ Քելէ» եւ «Շողեր ջան», որոնց կատարումները ոգեւորող մթնոլորտ ստեղծեցին սրահին մէջ:

Գեղարուեստական յայտագրի շարունակը մասնակիցն էր Լուսաւորիչ երգչախումբը: Վարիչ Յակոբ Մա-

միկոնեանի առաջնորդութեամբ «Երկնից, գետնից» եւ «Զինար ես» երգերը մատուցուեցան խորունկ յուզականութեամբ, դառնալով բազմաձայն երգչախմբային աւանդութեան զեղեցիկ օրինակ մը: Մթնոլորտը աւելի տպաւորիչ դարձուցին պետական օփերայի երգիչ Սերճան Կազէրօղլուն որ իր թաւձայնով մեկնաբանեց Կոմիտասի «Կռունկ»ը: Իսկ սիրուած երգչուհի Մարալ Այվազ-Չարլըպուքճու բազմապատկեց երաժշտական արտայայտչականութիւնը «Կոմիտասեան շարան»ի մեկնաբանութեամբ: Հնչեցին նաեւ Կոմիտասեան երգացանկէն ընտրուած «Հայրիկ Քո Հայրենիք», «Հոյ Նազան», «Անձըւն Եկաւ», «Գովեա Երուսաղէմ» եւ այլ երգեր, ի վերջոյ՝ «Ով Մեծասքանչ դու լեզու», որպէս հոյակապ վերջաբան:

Հուսկ բանքն արտասանեց Յարութիւն Վարդապետը, մեծապէս գնահատելով կազմակերպիչներն ու մասնակիցները: Աւարտին՝ հանդէս եկաւ մշակութային յանձնախումբի ատենապետուհի՝ Հերմինէ Չընար: Ան իր եւ գործակիցներուն անունով յուշատախտակներ լանձնեց յայտագրի մասնակիցներուն: Ապա «Եթքին Պէրպէրօղլու» մարզասրահին մէջ սարքուեցաւ ընդունելութիւն մը, որ առիթ ստեղծեց որ մասնակիցներն իրենց տպաւորութիւնները փոխանակեն եւ համատեղ վերապրին այն զգացումները զոր ապրած էին հանդիսութեան շնորհիւ:

Ռըտեարտ Քիփլինկի Մահուան 90-Ամեակին

Շարունակուած էջ 13-էն

«Ծաղիկ»-«Աղթամար»
« « «
ԵԹԵ
Եթէ կրնաս պահել գլուխդ առանձին,
Երբ խուճապի մէջ է չորս դիդամէն մարդ,
Եթէ կրնաս վստահ ըլլալ քու անձին,
Եթէ ուրիշներ կը կասկածին քու վրայ,
Եթէ կրնաս միշտ սպասել անձանձի,
Կամ չստել՝ շրջապատուած սուտերով,
Ատողներու մէջ ըլլալ սիրալիի,
Եթէ կրնաս ըլլալ բարի, բայց ուժով,
Եթէ կրնաս դուն երազել եւ սակայն
Չըլլալ գերին երազներու գերիշխող,
Յաղթանակէն ետք հանդիպիլ պարտութեան
Եւ նոյն ձեւով ընդունիլ զոյգն այդ խաբող
Եթէ կրնաս լսել քու խօսքը վճիտ՝
Չարափոխուած յիմարներու ծուղակի,
Ու խորտակուած տեսնել մեծ երկը կեանքիդ,
Բայց վերստին զայն շինելու գաս

ծուկիդ
Եթէ կրնաս շաիդ հազար ճիգերու,
Մէկ հարուածով յամձնել բախտի սեղանին
Եւ անտրտունք, առանց երբեք ողբալու
Վերսկսիլ ծայրէն ամէն ինչ կրկին,
Եթէ կրնաս սիրտ ու ջիղեր ու մկան Մաշունէն ետք նորէն լարել անդադար
Եւ դիմանալ, երբ մեռած է ամէն բան՝
Բացի կամքէն, որ կը մնայ մէջըդ վառ.
Եթէ կրնաս արքաներու հետ՝ պարզուկ,
Ամբոխին մէջ՝ առաքինի ըլլալ միշտ,
Եթէ թաղես կրքի թոպէն վաղանցուկ,
Եթէ մարդիկ անգոր են քեզ առթել վիշտ
Եւ ամէնուն կու տաս արժէքն իր արդար,
Եթէ սիրես, բայց սիրոյդ խեղճ դառնաս.
Քու կոէ Երկիրն ու անոր գանձերն անհամար,
Եւ աւելին՝ այն ատեն Մարդ ես, տղաս:

ՌԼՏԵԱՐՏ ՔԻՓԼԻՆԿ
Թարգմանեց՝
ՄՈՒՇԵՂ ԻՇՆԱՆ

Գիտութիւնից Դէպի Արուեստ

Շարունակուած էջ 12-էն

շուրջ 150 ժամ: Ժամանակակից արագընթաց կեանքում սա շուրջ խոչընդոտ է դառնում երիտասարդների եւ ստեղծագործողների համար, յատկապէս երբ աշխատանքի շուկայական արժէքը յստակ սահմանուած չէ:

«Երբ մարդը հարցնում է՝ որքանով կարող է վաճառել այդ 150 ժամուայ աշխատանքը, յաճախ պատասխան չունեն տալու»:

Մասնագէտների համոզմամբ՝ ասեղնագործութեան վերականգնումը եւ զարգացումը հնարաւոր է միայն պետական աջակցութեամբ: Անհրաժեշտ է ոլորտը բերել մշակութային «թրենդի» մակարդակի, խրախուսել ժամանակակից մոտեցումներով կիրառումը եւ ինտեգրել նոր ձեւաչափերի մէջ, որպէսզի այն չկորցնի իր կենսունակութիւնը:

Այս համատեքստում առանձնանում են նաեւ ժամանակակից արուեստագէտները փորձարարական աշխատանքները: Ներկայումս Արմինէն գործում է Լեւոն Խէչոյեանի «Հողի դողը» պատմուածքի հիման վրայ աշխատանք: Աշխատանքը կատարւում է ասեղնագործական եւ հիւսքային ժանեակի տեխնիկաներով:

«Ստեղծագործութեան զաղափարն արտայայտում է հողի ճաքումը, խորքից դուրս եկող յիշողութիւնն ու խօսքը՝ ձեւաւորուելով կլոր, ռելիեֆային կոմպոզիցիայի տեսքով: Տուեալ աշխատանքը իրականացուելու է նաեւ Մարաշի ասեղնագործական տեխնիկայով»:

Մասնագէտը վստահ է՝ նման նախաձեռնութիւնները կարող են նոր շունչ հաղորդել հայկական ասեղնագործութեանը՝ այն կապելով ժամանակակից արուեստի եւ մտածողութեան հետ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

ՏՕ-ՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆի մահուան տխուր առիթով կատարուեցան հետեւեալ նուիրատուութիւնները «Մասիս» շաբաթաթերթին որոնց համար մեր շնորհակալութիւնները կը յայտնենք:

«ՄԱՍԻՍ»

Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճէմեան \$300

Տէր եւ Տիկ. Յարութ եւ Անի Գասպարեան \$200

Մհրան եւ Թամար Խաչատուրեան \$100

Հաճըն-Ընդհանուր Ակնարկներ

Շարունակուած էջ 11-էն

Եւ այժմ իր տանը մէջ քանի մը տեղկեահներ կը բանեցնէ:

Ձեռներէցութեան խիստ ցայտուն օրինակ մը, որ մինչեւ իսկ շնորհաւորութեան արժանի է:

Իսկ ամուսինը, մարաշցի ներկարարէ մը բուրդ, մետաքս եւ ալյն ներկելու արհեստը սորված է 5 ոսկի վճարելով եւ բոլոր իրենց գործին պէտք եղած թելերը ինք կը ներկէ:

Աշխատանոցնին հաստատած են իրենց տան մէջ եւ կ'աշխատցնեն 5-10 աղջիկներ:

Կը պատրաստեն գլխաւորաբար միջին մեծութեամբ եւ փոքր գորգեր: Այսինքն՝ առհասարակ 3,5 կանգուն լայնք եւ 5,5 կանգուն երկայնութեան վրայ, երբեմն աւելի մեծ ալ, իսկ շատ անգամներ՝ պզտիկ գորգեր:

Անցողակի ըսենք, որ վերոյիշեալ չափերով գորգերու մէջ տեղկեահը 1 ոսկի ծախքով կը շինուի, իսկ փոքրերունը համեմատաբար ալ աւելի աժան, 40, 50, 60 դրշով:

Արդ՝ 3,5X5,5 գորգ մը, երկու վարպետ աղջիկ 1,5 ամիսէն կը հանեն, իսկ սովորական գործաւորուհիներ՝ 2 ամիսէն: Կ'աշխատին գործ գլուխ հետեւեալ կերպով:

100 խեղդ-կապը (իւմէկ)՝ 1 փարա կը հաշուեն:

Վերի չափերով գորգին մէկ կարգը՝ լայնքին վրայ, մօտ 600 խեղդ-կապ կը պարունակէ, որով մէկ կարգին համար կը ստանան 6 փարա ընթացիկ (ոսկին 127,5 դրշ.ի հաշուով):

Իւրաքանչիւր գործաւորուհի, իր կարողութեան համեմատ, օրական 10 կարգէն մինչեւ 20 կարգ կրնայ բանիլ, որով օրական ալ 60 փարայէն մինչեւ 3 դրուշ կրնայ շահիլ:

Կան գործաւորուհիներ, որոնք բացառաբար քիչ մ'աւելի կրնան շահիլ, եւ իրենց օրականը 4-5 դրուշի կու գայ:

Իբրեւ ծախք, 10 քաշ ներկուած բուրդ կ'երթայ, որով 10 մեծիտ բուրդի, 5 մեծիտ առէջքներուն համար բամպակէ թել, 5-6 մեծիտ ալ գործաւորողչէք, ընդամէնը 20-25 մեծիտ:

Այսպիսի գորգ մը Ատանայի մէջ կը ծախուի,- կ'ըսէ պրն. Թօփճեան,- 10-12 ոսկիի, որ տարին մէկ երկու անգամ այդ կողմերը ճամբորդելով, իրենց շինած գորգերը կը ծախէ:

Այս միեւնոյն գորգը փոխանակ բուրդով բանելու, մետաքսով բանուի, թէ աւելի գեղեցիկ, նուրբ կ'ըլլայ, եւ թէ համեմատաբար շատ աւելի սուղ կը ծախուի:

Ծախքին տարբերութիւնը 5-6 մեծիտ է, մինչդեռ գորգը կը ծախուի այն ատեն 16-20 ոսկիի:

Մետաքսէ գորգերը Եւրոպայի մէջ շատ կը ծախուի կ'ըսեն, ուր միւսներէն աւելի յարգի է:

Բացի գորգի տեղկեահներէն,

այս տանը մէջ տեսայ ուրիշ քանի մը փոքր տեղկեահներ, որոնց վրայ կը բանին փոքր տարածութեամբ սետճատէներ, խուրճ, եւն.:

Խուրճը ահագին սպառում ունի այս երկրին մէջ, եւ առհասարակ Թուրքիոյ ամէն կողմերը:

Տարբեր մեծութիւններով կը շինեն խուրճը, եւ իր մեծութեան եւ տեսակին համեմատ 5, 6 եւ մինչեւ 8 մեծիտ կը ծախուի հատը:

Աղջիկ մը առ առաւելն 8-10 օրէն կը հանէ խուրճ մը, եւ այս կարգի գործերէն շատ աւելի շահաւոր կը նկատուի այս գործը:

Եթէ այս մանր գործերը կարելի ըլլայ տուներուն մէջ տարածել եւ անհատական գործ դարձնել, իւրաքանչիւր գործաւորուհի գոնէ 8-10 դրուշ կրնայ շահիլ փոխանակ 2, 3 կամ 4 դրուշի:

Այս խուրճին պէս տակաւին ուրիշ մանր մոունր առարկաներ կան՝ ձիու կազմածներ եւն., եւ ինչպէս վերը ըսինք, եթէ վարժարաններու ծրագրին մէջ բարեշրջումը յառաջ բերուի, մասնաւորապէս գործի մարդիկ հասցնելու նպատակաւ, եւ այդ ուղղութեամբ աղջկանց վարժարանին մէջ ուստայնակութեան եւ գորգագործութեան այս փոքր ճիւղերը հաստատուին, հետզհետէ կը տարածուին, եւ բնակչութեան համար նախախնամական ձեռնարկներ կը դառնան:

Բայց երեք դժուարութիւններ կան այս գործերը ընդհանրացնելու համար այս կողմերը:

Ա) Դրամագլուխ, բ) Հաճընի հրապարակին վրայ ներկուած բուրդ եւ մետաքս չգտնուիլը, Գ) Սպառման աղբիւրներ կամ դիւրութիւններ, տրուած ըլլալով որ ամէն ոք Ատանա չի կրնար երթալ իր ապրանքները ծախելու:

Առաջին պայմանը կարելի է լրացնել, եթէ Հ.Բ.Ը.Միութեան յայտարարութեան համաձայն հայկական դրամատուն հիմնուի, ուրկէ փոխառութիւն ըլլայ, անշուշտ Հ.Բ.Ը.Միութեան միջոցաւ:

Երկրորդ եւ երրորդ պայմանները լրացնելու համար, հարկ է տեղացիներէն համագործակցական ընկերութիւններ կազմել, որոնք, իրենց ապրանքները ծախելու միջոցներ կը ստեղծեն, մանաւանդ եթէ Հ.Բ.Ը.Միութեան կողմէ բարոյական աջակցութիւն շնորհուի, Եւրոպայի, Պոլսոյ եւ այլ հրապարակներու վրայ ներմուծելու համար:

Այս գործին մէջ գլխաւոր տեղ կը բռնէ նաեւ բուրդը գգելու գործողութիւնը, որ ներկայիս ձեռքով կը կատարեն ահագին դժուարութիւններով, այնպէս որ բուրդի գինին վրայ մեծապէս կ'ազդէ:

Կարծեմ թէ դէպքէն վերջ Այրիախնամի յանձնաժողովին կողմէ բուրդ գգելու մեքենայ մը ղրկուած է հոս, ի հարկէ մեր ակնարկած անպատեհութիւնները դիւրացնելու համար: Բայց դժբախտաբար, մեքենան բանեցնելու վարժ մէկը չգտնուելուն, այդպէս երեսի

վրայ մնացած է փոշիներուն մէջ: Պարագաներու բերմամբ առիթը չունեցայ երթալ տեսնելու, գուցէ կարողանայի գործածութեան վիճակի մէջ դնելով գայն, օգտակար դարձնէի տեղացիներուն:

Կեսարիոյ մէջ, ուր գրեթէ գորգագործութիւնը տարածուած է, եւ շատ մը տուներու մէջ իբրեւ անհատական զբաղում դարձած է, բուրդ գգելու մեքենաներ կան, հետեւաբար եւ գանոնք բանեցնելու կարող վարպետներ: Կարելի է ներկայիս անոնցմէ մէկը բերել մէկքանի ոսկի գոհելով, եւ սորվեցնել տեղացիներէն մէկքանի հոգիներու:

Բուրդ մանելը այժմ, բոլոր շրջականերու մէջ կատարուածին պէս, հոս ալ պառաւ կիները իրենց մատմանով կը մանեն, որ որոշ չափերով գոհացուցիչ կրնայ նկատուիլ առայժմ, եթէ գգելու գործողութիւնը դիւրացնելու միջոցները ձեռք առնուին:

Եւ եթէ հաճընցին լաւ ըմբռնէ թէ անհատական շահերը ալ աւելի կ'ապահովուին հանրային կամ հասարակաց ձեռնարկներով, թէ իրարու դէմ նախանձելէ աւելի, իրարու մօտ գալով, համագործակցականներ կազմեն, այն ատեն իրենց համայնքն ալ թշուառութենէ կ'ազատի:

Արտաքին նպաստները, ինչ որ ըլլան անոնց կարեւորութիւնը, ողորմութեան ձեւին տակ թէ անբարոյացուցիչ են, թէ նուաստացուցիչ, եւ թէ իրենց ազդեցութիւնը շատ վաղանցուկ:

Յաջողութիւնը, յառաջդիմութիւնը եւ տնտեսական վիճակի բարգաւաճումը փնտռելու են հատքով կատարուած անհատական աշխատութեան մէջ, համագործակցական կազմակերպութեան հովանիին տակ:

Որովհետեւ Հաճըն գտնուած պահուէր որ ընդհանուր զօրահանութեան հրաման եկած էր, հետեւաբար անկարելի եղաւ աւելի ընդարձակ ուսումնասիրութիւններ կատարել:

Չմոռնանք սակայն ըսելու թէ Մարաշի բաժնին մէջ վարդամշակութեան վրայ խօսած ատեննիս յիշած էինք, որ Արեւելեան գորգերու ընկերութեան Հաճընի մասնաճիւղի տնօրէն Յովհաննէս էֆ. Թելդրութիւններ կ'ընէ հոս ալ վարդի մշակութիւնը տարածելու, որու խորհուրդին հետեւելով մէկքանի անձեր սկսած են արդէն վարդ տնկել:

Այնպէս կը կարծենք, թէ վարդի մշակութիւնը այս կողմերը քիչ ատենուան մէջ պիտի տարածուի եւ շահաբեր զբաղում մը դառնայ, եթէ սկզբնաւորութեան մէջ Հ.Բ.Ը.Միութիւնը քաջալերէ այս գործը, մեր առաջարկած միջոցներով:

Թերեւս աւելորդ չըլլայ ըսել, թէ Հաճըն, շատ բազմամարդ ըլլալով, - արդէն բազմածին ալ են,- մէկ ընտանիքի մէջ 12-15 անդամներ տեսնել սովորական է հոս - օգտակար կ'ըլլայ շատ մը տեսակէտներով, կարեւոր գաղթականութիւն մը հանել իրմէ, յարմարագոյն առիթով, շրջակայ գիւղերուն մէջ, ինչպէս Շար-տէրէի մօտ, կամ Ռումլուի, բոլոր գիւղի շրջակաները հողեր գնելով, այնտեղերը հաստատել:

Ըսինք արդէն, որ խաղախորդութեան եւ ուրիշ արհեստներու մասին, ինչ որ առաջարկած ենք Ձէյթունի համար, միեւնոյնը նաեւ պէտք է գործադրել հոս ալ, ինչպէս եւ անասնապահութիւն, ծառամշա-

կութիւն եւ այլն, եւ այլն:

Հաճընի ձորին երկայնութեան, Սիս երթալու ճամբուն վրայ գառիվարերը մեծ քանակութեամբ ձիթենիներ կը գտնուին, որոնք մշակումի կը կարօտին արդիւնք տալու համար:

Հաճընի բարեկեցիկներէն տիար Տումանեան անուն անձը, որ բաւական ընդարձակ հողեր ունի, գլխաւորապէս Գարս-պազարի կողմերը, իւր գաւակներէն մին Պոլսոյ Հալգալիի հողագործական վարժարանը ղրկած է, որ յաւարտ շրջանին, իր ամբարած գիտական պաշարներով հօրը խիստ կարեւոր աջակից մը պիտի դառնայ, ինչ որ գովելի հեռատեսութիւն մ'է, եւ տիար Թ. Տումանեանի գործի մարդու յատկութիւնը երեւան կը բերէ:

Իրեն հետ տեսնուած ատենս հետեւեալ խիստ կարեւոր առաջարկութիւնը ըրած է ինձ, որ յիշատակութեան ձեւով կը ներկայացնեմ Հ.Բ.Ը.Միութեան Կեդրոնական վարչութեան պատկառելի ժողովիդ:

Գարս-պազարի մօտերը ընդարձակ ճախճախուտք մը կը գտնուի 60.000 արտավար տարածութենէն աւելի: Երկու տարի առաջ մէկքանի անձանց հետ ընկերութիւն մը կազմելով, ընդամէնը 12 հոգի, հայ եւ թուրք խառն, կառավարութենէն մենաշնորհ ստացած են այդ ճախճախուտքը չորցնելու եւ մշակութեան դնելու համար:

Պաղտատի երկաթուղիի ճարտարագէտներէն գերման ճարտարագէտի մը խորհուրդներուն դիմելով, այդ մասին իր կարծիքը հարցուցած են, որ տեղւոյն վրայ ուսումնասիրութիւններ կատարելով, պատրաստած է ճախճախուտքին քարտէսը՝ տեղագրական եւ հարթաչափական, եւ չորցնելով մշակութեան դնելու մասին ալ ընդարձակ տեղեկագիր մը տուած է:

Հիմնուելով այդ տեղեկագրին վրայ, ամբողջ գործողութիւնները կ'աւարտին 5,000 ոսկի ծախքով մը, որուն մօտաւորապէս 2,000 ոսկին - ըստ տիար Տումանեանի յայտարարութեան - կարելի է ձեռք բերել մէջը գտնուած ծառերը եւ ձուկերը ծախելով:

Արդ, պրն. Տումանեան կ'ըսէ, որ եթէ Հ.Բ.Ը.Միութիւնը ինք ստանձնէ, հարկ եղած դրամագլուխը դնելով ճախճախուտքը չորցնել, կը խոստանան տարածութեան կէսը, 30.000 արտավարը նուիրել Միութեան:

Այդ կողմերը սովորաբար մէկ արտավար հող 5 ոսկի կ'արժէ առնուազն, եւ այսպիսի կոյս հող մը բնական է որ շատ աւելի արժէ, բայց նոյնիսկ արտավարը 2 ոսկի ենթադրելով, 60.000 ոսկիի շահ մը ձեռք բերած կ'ըլլայ Միութիւնը, ուր կարելի է մէկքանի գիւղեր հաստատել:

Ըսի արդէն պրն. Տումանեանին, որ այդպիսի շահադիտական ձեռնարկներ Հ.Բ.Ը.Միութեան ծրագրէն դուրս կ'իյնան, բայց կարելի է տարբեր միջոցներով ընդգրկել գործը, եթէ, տրուած տեղեկագիրը ուսումնասիրելով, գործնական ձեռնարկ մը նկատուի:

Հետեւաբար օգտակար դատեցի յիշատակութեան համար անցողակի արձանագրել սոյն պարագան եւ Կեդրոնական վարչութեան պատկառելի ժողովիդ ուշադրութեան յանձնել:

«ԱՐԱՐԱՏ» Բացառիկ 2026

«Պարսելոնան» Յաղթեց «Ռեալին» Եւ Նուաճեց Սուփերգաւաթը



Սպանիոյ ախոյեան «Պարսելոնան» նուաճեց երկրի սուփերգաւաթը Սէուտական Արաբիոյ ձիտտա քաղաքին մէջ կայացած եզրափակիչին։ «Պարսելոնան» 3։2 արդիւնքով պարտութեան մատնեց Մատրիտի «Ռեալին»։

Քաթալոնական ակումբէն տուպլի հեղինակ դարձաւ պրագիլցի յարձակող Ռաֆինիան, իսկ կողի հեղինակ դարձաւ նաեւ լեհ յարձակող Ռոպերթ Լեւանտովսքին։

«Ռեալի» կազմէն ուշադրութիւն գրաւեցին պրագիլցի յարձակող Վինիսիուս Ժունիորը եւ սպանացի յարձակող Կոնսալօ Կարսիան։

«Պարսելոնան» 16-րդ անգամ նուաճեց Սպանիոյ սուպերգաւաթը եւ դարձաւ մրցաշարի բացարձակ մրցանակակիրը։ Անցեալ տարուան եզրափակիչին եւս «Պարսելոնան» 5։2 արդիւնքով յաղթած էր «Ռեալին»։



Անգլիոյ Գաւաթ

Մարթինելլիի Յեթ-Թրիքը «Արսենալին» Յաղթանակ Ապահովեց

Անգլիոյ փոխախոյեան Լոնտոնի «Արսենալը» հասաւ Անգլիոյ գաւաթի մրցաշարքի 1/16 եզրափակիչ։

Սպանացի Միքէլ Արթեթալին գլխաւորած խումբը երրորդ շրջանին հիւրընկալուեցաւ «Փորթսմութհն» եւ վստահ յաղթանակ արձանագրեց՝ 4։1 արդիւնքով։ Հիւրերու կազմէն հեթ-թրիքի հեղինակ դարձաւ պրագիլցի յարձակող Կապրիէլ Մարթինելլին։

«Մանչըսթըր Եունայթըտը» Դուրս Մնաց Պայքարէն

Անգլիոյ գաւաթի մրցաշարքի 1/32 եզրափակիչին «Մանչըսթըր Եունայթըտը» չկրցաւ յաղթահարել «Պրայթընի» արգելքը։

Գլխաւոր մարզիչի պաշտօնակատար Տարեն Ֆլեթչըրի ղեկավարութեամբ մանչըսթըրեան խումբը «Օլտ Թրաֆորտ»-ի մէջ պարտուեցաւ 1։2 արդիւնքով։

«Պրայթընը» ապահովեց իր տեղը 1/16 եզրափակիչին մէջ։

«Ասթըն Վիլլան» Պայքարէն Դուրս Չգեց «Թորքնիեմին»

Անգլիոյ գաւաթի մրցաշարքի 1/32 եզրափակիչին Լոնտոնի «Թորքնիեմը» իր դաշտին վրայ ընդունեց «Ասթըն Վիլլային» եւ պարտուեցաւ 1։2 արդիւնքով։

«Ասթըն Վիլլան» հասաւ եկաւ 1/16 եզրափակիչ։

Անցեալ Տարուան Գաւաթակիր «Քրիսթլ Փէլսաը» Պարտուեցաւ 6-րդ Դասակարգի Խումբէն

Անգլիոյ գաւաթի մրցաշարքի երրորդ հանգրուանին «Մաքլսֆիլտ Թաունը» անակնկալ յաղթանակ արձանագրեց՝ 2։1 արդիւնքով պարտութեան մատնելով «Քրիսթլ Փէլսաը»։

«Մաքլսֆիլտ Թաունը» կը մասնակցի Անգլիոյ 6-րդ դասակարգի ն եւ կը համարուի կիսապրոֆեսիոնալ խումբ։

1908 թուականէն ի վեր այս առաջին դէպքն է, երբ ֆրեմիէր Լիկան չներկայացնող խումբ մը կը յաջողի դուրս ձգել գործող գաւաթակիրը։

Արման Ծառուկեանի Տպաւորիչ Յաղթանակը



Խառն մենամարտերու (UFC) վարկանիշի առաջատար Արման Ծառուկեանը (Հայաստան) ԱՄՆ-ի Ֆլորիտա նահանգին մէջ կայացած ՌԱԲ 5 մրցաշարին տպաւորիչ յաղթանակ արձանագրեց ամերիկացի Լենս Փալմըրի դէմ։

Ծառուկեանը ամբողջովին գերիշխեց մենամարտին եւ յաղթեց առաջին մրցափուլին՝ 10։0 արդիւնքով։

Ափրիկէի Ազգերու Գաւաթ - Կիսաեզրափակիչի Ձոյգերը



Մարոքքոյի մէջ ընթացող Ափրիկէի ազգերու գաւաթի մրցաշարքին յայտնի դարձան կիսաեզրափակիչի զոյգերը։

Վերջին ուղեգիրը նուաճեց Եգիպտոսը, որ 3։2 արդիւնքով յաղթեց Քոթ Ծ'իվուարին։

Կիսաեզրափակիչ խօրհրուս կը մրցին՝

Նիկերիա - Մարոքքօ

Սենեկալ - Եգիպտոս

«Ինթեր» Ու «Նափոլի» Խաղը Աւարտեցաւ Հաւասար

Իտալիոյ առաջնութեան 20-րդ հանգրուանին փոխախոյեան Միլանի «Ինթերը» իր դաշտին վրայ մրցեցաւ գործող ախոյեան «Նափոլիի» դէմ։ Հանդիպումը աւարտեցաւ հաւասար՝ 2։2 արդիւնքով։

«Ինթերի» կողերը նշանակեցին իտալացի պաշտպան Ֆետերիքօ Տիմարքոն եւ թուրք կիսապաշտպան Հաքան Չալհանօղլուն։ «Նափոլիէն» տուպլի հեղինակ դարձաւ սկովտիացի կիսապաշտպան Սքոթ Մաք Տոմինայը։

Հայաստանի ազգային հաւաքականի նախկին աւագ Հենրիխ Մխիթարեանը հանդիպումը սկսաւ պահեստայիններու շարքին մէջ եւ փոխարինման մտաւ խաղադաշտ 62-րդ վայրկեանին։

20 հանգրուանէ ետք «Ինթերը» 43 կէսով կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը, իսկ «Նափոլին» երրորդ դիրքին վրայ է՝ 39 կէսով։

Տենպելէն 60 Միլիոն Եւրօ Տարեկան Աշխատավարձ Կը Պահանջէ ՊՍԺ-էն

Ֆրանսայի ախոյեան եւ Ախոյեաններու Լիկայի գաւաթակիր ՊՍԺ-ն ֆրանսացի յարձակող Ուսման Տէմպելէին առաջարկած է նոր պայմանագիր՝ տարեկան 30 միլիոն եւրօ աշխատավարձով, սակայն առաջարկը մերժուած է։

«Ոսկէ Գնդակ»-ի դափնեկիրը պահանջած է տարեկան 60 միլիոն եւրօ աշխատավարձ, կը հաղորդէ Footmercato-ն։

Տէմպելէի գործող պայմանագիրը ուժի մէջ է մինչեւ 2028 թուականի Յունիսը։ Կողմերը տակաւին չեն կրցած համաձայնութեան հասնիլ պայմանագրի երկարաձգման շուրջ։

28-ամեայ ֆուլթպուլիստը 2023 թուականէն ի վեր ՊՍԺ-ի կազմին մէջ մասնակցած է 111 հանդիպումի, նշանակած է 47 կոլ եւ կատարած՝ 34 կոլային փոխանցում։ Transfermarkt-ը անոր փոխադրութեան արժէքը կը գնահատէ 100 միլիոն եւրօ։